

նալ հարիմ բաշու կնոջ կերպարանափոխութիւնը, երբ նա տեսաւ որ Շահը ինձ հաւանեց: Նա մի այնպիսի նայուածք ձգեց ինձ վրայ որ կանգնածս տեղը սկսեցի դողալ: Բայց դու կը զարմանաս լսել որ երբ Շահը անդէրունից դուրս գնաց, խանու՛մը սկսեց բոլորովին ուրիշ կերպ վարուել ինձ հետ: Նա այլևս «անիծած աղջիկ», «սատանի ձագ» անուններ չտուեց ինձ, այլ «սէրս», «նոգիս», «աչքիս լոյսը», «զաւակս» և այլ այդպիսի բառերով խօսեց ինձ հետ: Նա մինչև անգամ հրաւիրեց ինձ ծխել իր դայլանը և իր մատներով քաղցրաւենիք զրեց իմ բերանում: Վրացուհին իր նախանձից այլևս չկարողացաւ նայել երեսիս, սակայն կանանցից ոմանք շնորհաւորեցին և ոմանք էլ բարեմաղթութիւններ արին ինձ: Վերջապէս ես, լսեղձ Զինարս, որ աշխարհիս ամենաթշուառ արարածն էի, այժմ ընդհանուր ուշադրութեան, զմայլման առարկայ եմ դարձել:

Զինարը այստեղ վերջացրեց իր խօսքը, և ես տեսնելով որ յանդգնութիւն վը լինէր իմ կողմից Շահին նախանձորդ հանդիսանալ, յոյսս կտրեցի և ինքս էլ բարեմաղթութիւններ արի նրան:

Կանանոցից նրան կանչեցին. նա հազարումէկ խօսքերով հաւատացրեց ինձ որ թէև ինքը բաժանոււմ էր ինձանից, սակայն երբէք չի մոռանալ ինձ:

Եւ նա շտապեց ցած:

ԳԼ. ԼԱ.

Հաջի Բարայի մտածմունքը Զինարի մասին:—Նրա բժշկական հանճարը:

Զինարի հեռանալուց յետոյ ես խոր մտածմունքի մէջ ընկայ: «Եթէ այսպէս է աշխարհը, մտածեցի ես, ուրեմն այս վերջին մէկ ամսուայ ընթացքում ես երազի մէջ եմ եղել: Ես կարծում էի թէ Մաջնունն էի դառել, և Զինարը՝ Լէյլան: Ինձ այնպէս էր թոււում որ քանի դեռ արև և լուսին կար, մենք կը շարունակէինք միմիանց սիրել, միմիանց սիրով հալուել ու մաշուել, ամուսին պէս վառուել ու սրաներս խորովել. սակայն Շահը եկաւ, նայեց նրան, երկու խօսք ասաց, և ամեն բան վերջացաւ: Հաջի Բարան մի բողբոջում մոռացուեց, և Զինարը արքունի տան անգամ դարձաւ»:

Տենդային դրութեամբ ես անցկացրի ամբողջ գիշերը: Միւս առաւօտը ես կանուխ զարթնեցի և վճռեցի քաղաքից դուրս գնալ և մի հանդարտ տեղում նստել ու զբաղուել իմ

մտածմունքներով: Ես իջայ կտրից և տանից դուրս գնացի: Տան դռնից մի քանի քայլ հեռացած՝ հանդիպեցի Զինաբին որ մի գեղեցիկ և լաւ զարդարուած ձիու վրայ նստած՝ Շահի ներքեքինիներից մէկի առաջնորդութեամբ և մի քանի ծառաների ուղեկցութեամբ գնում էր չգիտեմ որտեղ:

Մի բոպէ ես մտածեցի, որ նա ինձ տեսնելիս շուտ յետ կը քաշէր իր քօղը և ինձ կը նայէր. բայց ոչ. նա իսկի էլ չշարժուեց: Ես անցայ, վճռելով այլևս չմտածել նրա մասին, սակայն միտքս այնքան շփոթուեց, որ ես չհասկացայ թէ ո՞ր կողմն եմ գնում, այնպէս որ յանկարծ տեսայ որ Զինաբի ետևից գնում եմ դէպի պալատը:

Մենք հասանք այն հրապարակը որ ընկած է պալատի մեծ դրան դիմաց: Այստեղ զօրահանդէս էր կատարուում Շահի ներկայութեամբ, որը նստած էր պալատի դրան գլխի վերնայարկում: Առանց որևէ արգելքի հանդիպելու, Զինաբն ու իր ուղեցոյցը անցան հրապարակի միջով և մտան պալատը: Ես էլ ուղեցի հետևել նրանց, սակայն ոստիկանները թոյլ չտուին ինձ:

Այդ զօրախումբը որ քննութեան էր ենթարկուում, բաղկացած էր մի գունդ հեծելազօրքից, որի հրամանատարն էր Նամարդ խան դահճապետը: Զօրահանդէսը բոլորովին մի նոր բան էր ինձ համար: Ես ակնապիշ նայում էի ձիաւորներին և նրանց ձիերին, նիզակներին և հրացաններին, որոնք յիշեցնում էին ինձ այն օրերը, որ ես անց էի կացրել թիւրքմէնների մօտ: Տեսաբանը ոգևորեց ինձ, և ես սկսեցի մի բուռն իղձ ըզգալ մի նոր, մի աշխոյժ կեանք սկսելու:

Հեծելազօրքը կանգնած էր հրապարակի մէկ կողմում: Պատերազմի քարտուղարը, շրջապատուած իր վեց գրագիրներով՝ բազմել էր մէջ տեղում և զբաղուում էր իր մատեաններով: Զինաւորներին կանչելու համար նշանակուած էին երկու մարդ, որոնք երբ միաձայն կանչում էին մէկ ղինուորի իր անունով, վերջինս իսկոյն պատասխանում էր «Նազէր» (պատրաստ) և սրարշաւ քշելով իր ձին, դալիս անցնում էր հրապարակի մէջտեղով, և Շահի դիմացը հասնելով՝ մի խոր գլուխ էր տալիս նրան, յետոյ անցնում գնում էր միւս կողմը: Բազմապիսի էին ձիաւորների տեսքերն ու ձևերը: Մի քանիսը այնպէս էէին տանում իրանց որ մարդ կարծում էր թէ նրանք Բոսթամներ էին: Մի քանիսն էլ, որոնք իրանց ձիերը փոխ էին առել իրանց բարեկամներից, այնքան շշտած, շշկուած էին, որ կարծես թէ նրանք արդէն իսկական պատերազմի մէջ լինէին: Ես ճանաչում էի իմ ծանօթներից շատերին և ոգևորուում

էի նրանցով. բայց ամենից շատ իր ձեւերով ինձ ոգևորում էր մի երիտասարդ, որի ձին սրընթաց վազելու ժամանակ սայթաքեց, ընկաւ և մեծ ուժգնութեամբ վայր գլորեց նրան: Նա սաստիկ փնասուեց: Մարդիկ նրան խսկոյն վերցրին և դուրս քերին հրապարակից: Ամբոխը շրջապատեց նրան: Ամեն մարդ մի հնար էր քառաբարկում նրան փրկելու համար: Մարդկանցից մէկը որ ինձ ճանաչում էր, հրաւիրեց ինձ, իբրև Շահի հաքիմ բաշու աշակերտին, որ մի ճար անեմ նրան: Ես էլ առանց զանգաղելու ինձ բժիշկ ձեացրի և մօտեցայ ջախջախուած երիտասարդին, որը ըստ երևոյթին անկենդան էր: Արդէն նախքան իմ հասնելը նրան շրջապատողները զանազան հնարքներ էին գործ դրել նրան ուշքի բերելու: Մէկը յանուն Հօսէյնի ջուր էր ածել նրա կողորդի մէջ, միւսը մի եղեգնով փրչել էր նրա քթի մէջ նրան զարթեցնելու համար, մի ուրիշը շփել էր նրա մարմինը արեան շրջանառութեանը մղում տալու համար կայլն:

Հէնց որ ես երեացի, բոլորն էլ մի կողմ քաշուեցին, և ես մեծ հանդիսաւորութեամբ մօտենալով հիւանդին՝ բռնեցի նրա ձեռքը և փորձեցի նրա զարկերակը: Մարդիկ լուռ սպասում էին իմ կարծիքը լսելու: Ես յայտնեցի նրանց որ ճակատագիրը հարուածել էր երիտասարդին և շեշտեցի որ կեանքըն ու մահը մաքառում են միմիանց դէմ նրան իւրացնելու համար:

Հետեւելով Միրզա Ահմադի օրինակին՝ ես նախ խիստ յուսահատական կարծիք յայտնեցի հիւանդի մասին. յետոյ հրամայեցի, իբրև փորձ, լաւ ճօճել նրան որպէսզի ստուգուէր թէ արդեօք կեանք կար նրանում, թէ չէ: Այս հրամանս արձակեցի թէ չէ, մարդիկ խսկոյն սկսեցին այնպէս ճօճել նրան, այնպէս ուժգնութեամբ այս ու այն կողմը ձգել նրան որ քիչ մնաց թէ նրա մարմնի բոլոր անդամները յօշալոյծ լինէին:

Այս բանն ապարդիւն անցաւ, և ես մտածում էի մի ուրիշ հնար առաջարկել, երբ ամբոխի միջից յանկարծ լսուեց «Ո՜հ ըէղիղ» (ճանապարհ տուէք), և Ֆոանդնիերի հաքիմը, որի մասին ես արդէն խօսել եմ, երևաց: Երևի նա ուղարկուել էր Ֆոանդ գետապանի կողմից, որը ականատես էր եղել երիտասարդին պատահած դէպքին: Դեռ հիւանդին չտեսած՝ նա հետուից ասաց.

— Անմիջապէս արիւն առէք զբանից. շուտ, շուտ, առանց մէկ բոպէ ուշացնելու:

— Ի՞նչ, արբ՛ւն առնել, բացազանչեցի ես. այդ ի՞նչ նոր վարդապետութիւն է: Միթէ չգիտէք որ մահը պաղղ է, և ա-

բիւնը տաք: Միթէ չգիտէ՞ք որ պաղ հիւանդութիւնները պէտք է տաք դեղերով բժշկել: Միթէ բժիշկների հայր Փողբաթը այդպէս չէ՞ պատուիրել, և միթէ դուք կը համարձակուէ՞ք ասել թէ նա սխալուած է: Պարզ բան է որ եթէ այդ խեղճի մարմնից արիւն առնուի, նա իսկոյն կը մեռնէ: Գնացէ՛ք ու պատմեցէ՛ք ամբողջ աշխարհին, որ ես այդպէս եմ ասում:

— Արիւն առնելու խնդրի մասին այլևս կարիք չկայ ոչ մի բառ խօսելու, ասաց Փոսնդ հաքիմը: Սա արդէն մեռած է սրա համար այժմ տաքն ու պաղը միևնոյնն են:

— Ուրեմն, ասացի ես, մահը իր գործը տեսել է: Մարդկային խելքն ու գիտութիւնը ոչինչ է Ալլահի դատաւճռուի դիմաց:

Մի մուլլա որ ամբոխի մէջ էր, հրամայեց իսկոյն մեռածի ոտները դէպի դէրլէն դարձնել, ոտի բոյթերը միմիանց հետ կապել և մի թաշկինակով պինդ կապել նրա գլուխը կզակի տակից: Այդ անելուց յետոյ նա սկսեց արտասանել ճշմարիտ հաւատքի դաւանութիւնը, որը կրկնում էր ամբողջը: Մինչ այս արարողութիւնը կատարուում էր, հանգուցեալի ազգականներից մի քանիսը հասան, նստեցին դիակի շուրջը և սկսեցին լաց ու կոծը: Յետոյ դապաղը բերուեց, և դիակը նրա մէջ դրուելով՝ տարուեց իր ընտանիքի մօտ:

Հանգուցեալը՝ Նամարդ խան դահնապետի իշխանութեան ներքոյ գտնուող Նասաղչիներից մէկն էր: Նասաղչիների պաշտօնն է, երբ Շահը դուրս է գնում, նրա առջևից գնալ, անցորդներին քշել ճանապարհներից և կարգ պահպանել: Բացի դրանցից, բոլոր պետական բանտարկեալները նրանց հսկողութեանն են յանձնուում: Մի խօսքով, նրանք գործում են որպէս ոստիկանական պաշտօնեաներ ամբողջ Պարկաստանում:

Մտքիցս իսկոյն անցաւ թէ՛ շատ լաւ կը լինէր եթէ ինձ յաջողուէր հանգուցեալ նասաղչու տեղը բռնել: Այո, շատ լաւ կը լինէր, մանաւանդ որ բնաւորութեամբ՝ ես աւելի յարմար էի այդպիսի մի պաշտօն վարելու, քան դեղեր բաղադրել և հիւանդներին այցելել:

Երկա՛ր մտածելով այդ պաշտօնը ձեռք բերելու հնարաւորութեան վրայ, ես յիշեցի, որ դահնապետը շատ մտերիմ բարեկամ էր Միրզա Ահմադի հետ: Ուստի ես վճռեցի խնդրել վերջինից, որ նա միջնորդէր և աշխատէր այդ բանը յաջողացնելու ինձ համար:

Հաշի Բարան նասաղչի է դառնում:

Միւս առաւօտը, նախ քան հաքիմ բաշու «դառ-է-լիւս-նէ» *) զնալը եւ տեսնուեցի նրա հետ և յայտնելով նրան իմ բաղձանքը, շատ թախանձեցի որ նա առանց ժամանակ կորցնելու դահճապետին զիմէր և խնդրէր նրանից ինձ յանձընել հանդուցեալ նասաղչու պաշտօնը: Կրկին և կրկին եւ խնդրեցի նրանից, որ ինչ որ անելու էր, իսկոյն անէր, որովհետեւ մի քանի օրից յետոյ նա՝ հաքիմ բաշին Շահի հետ զնալու էր ամարանոց, և եթէ զնալուց առաջ այդ գործը չյաջողուէր ինձ համար, եւ էլի կը մնայի իր ծառայութեան մէջ— մի ծառայութիւն որ անտանելի էր դարձել ինձ համար:

Որովհետեւ Միրզա Ահմադը շատ փող էր մտնել Շահին հիւրասիրելու համար, նա խիստ սահմանափակել էր իր տան ծախքը, և նա շատ ուրախ էր մի ժամ առաջ ազատուել ինձ պէս մի քաղցած մարդուց: Ուստի նա ուրախութեամբ խոստացաւ ջանալ, ոչ մի միջոց չ'չինայել իմ նպատակի իրագործման համար: Նա խոստացաւ այդ օրը կէսօրից առաջ անպատճառ տեսնուել դահճապետի հետ և խօսել իմ մասին. ինձ էլ պատուիրեց որ կէսօրին հանդիպեմ նրան:

Համաձայն հաքիմ բաշու պատուերին եւ ճիշտ կէսօրին դահճապետի պաշտօնական սենեակի առջևն էի: Սենեակի մի անկիւնում նա՝ դահճապետը մատուցանում էր իր միջօրէի ազօթքը, և ըստ հրեռոյթին նա այնպէս «վերացեալ» էր որ կարծես թէ իսկի չէր լսում արքունի բանաստեղծի և փոխարարողապետի խօսակցութիւնը, որ տեղ ունէր նոյն սենեակում:

Վերջինս խօսում էր տարաբախտ նասաղչու մասին, և այնքան չափազանցութիւններ էր անում, որ ազօթող դահճապետը յանկարծ ընդհատեց իր ազօթքը և ասաց.

— Ին դուռո՞ւղ աստ այդ սուտ է). մի քիչ, մի քիչ համբերնցեք, և եւ ձեզ կը պատմեմ թէ ինչպէս եղաւ:

Ազօթքը վերջացրեց թէ չէ, նա իսկոյն սկսեց պատմել նասաղչու մասին: Բայց նա փոխարարողապետիցն աւելի չափազանցօրէն պատմեց: Նա ասաց որ իբր թէ պարսիկ հաքիմը նրան ուշքի էր բերել և շուտով կ'առողջացնէր նրան, սա-

*) Պալատի դուռը, որտեղ հասարակական գործերին վերահստութիւն է արւում:

կայն ֆուանգ հաքիմը նրանից արիւն հանելով սպանել էր նը-
րան:

Մինչդեռ նա շարունակում էր իր պատմութիւնը, Միր-
զա Ահմադը ներս մտաւ: Նա էլ հաստատեց դահճապետի ա-
սածները և մատնացոյց անելով ինձ՝ ասաց.

— Ահա, սա է այն մարդը որ պիտի փրկէր նասաղչու
կեանքը, եթէ այդ անօրէն ֆուանգը չխանգարէր նրան:

Ներկայ եղողների աչքերը ուղղուեցին ինձ վրայ, և նրանք
միաբերան խնդրեցին ինձանից դէպքը պատմել բոլոր իր մանը-
րամասնութիւններով: Ես պատմեցի և իմ ասածները շատ հա-
մապատասխան դարձրի Միրզա Ահմադի և փոխ-արարողապե-
տի ասածներին: Թէպէտ ես միևնոյն ժամանակ չմոռացայ ա-
մենայն երախտագիտութեամբ խոստովանել որ իմ բժշկական
գիտութեան համար ես պարտական էի հաքիմ բաշուն:

Հաքիմ բաշին ոգևորուելով իմ խօսքերից՝ դահճապետին
ասաց.

— Սա կամենում է ստանձնել հանգուցեալ նասաղչու պաշ-
տօնը: Իսկապէս սրանից աւելի յարմար մի մարդ դուք չէք
կարող գտնել. եթէ դուք սրան յանձնէք այդ պաշտօնը, շու-
տով կը տեսնէք թէ սա ինչքան պիտանութիւն ունի ձեզ հա-
մար:

— Ի՞նչ էք ասում, հարցրեց դահճապետը. մի՞թէ կարելի
է որ մի հաքիմ ցանկութիւն ունենայ դահիճ դառնալու: Այդ
շատ զարմանալի ցանկութիւն է:

— Ո՛չ մի միևնոյն չկայ այդ բանի մէջ, ասած բանաստեղծը,
նայելով հաքիմ բաշուն. բժիշկն ու դահիճը միևնոյն կարգի
մէջ են. ի՞նչ տարբերութիւն կայ մի դեղհատով և մի սրի հա-
րուածով մարդ սպանելու մէջ:

— Օ՛, եթէ այդպէս ես հաշուում, ուրեմն ես էլ պիտի ասեմ,
որ բանաստեղծն էլ նոյն կարգումն է. որովհետև նա սպանում
է մարդուս անունն ու պատիւը, և ամեն մարդ կը վկայէ որ
բանաստեղծի գրիչը աւելի զարհուրելի մահ է պատճառում,
քան բժշկի դեղհատն ու դահիճի սուրը:

— Այդ բոլորն էլ շատ լաւ էք ասում, մէջ ընկաւ դահճա-
պետը. դուք մարդկանց սպանեցէք ինչ ձևով որ կամենում էք,
միայն թէ ինձ թողէք իմ սովորական ձևով սպանել, այն է
սպանել այնպէս, ինչպէս մի զինուոր է անում: Մի խոնարհ կոխ-
լինի, որ ես ընկնեմ մէջը, նիղակով հարուածեմ, թրով խող-
խողեմ, ատրճանակով զլուխներ թոցնեմ օդի մէջ—էհ, սրանք
ինձ բաւական են. էլ ուրիշ ոչինչ չեմ ուզում: Ես հոտ կը քաշեմ
վառօդի ծուխը, դու հոտոտիք վարդը, պարոն բանաստեղծ: Ես

կը զուարճանամ թնդանօթի բոմբիւնով, զու հրճուիր սոխակ-
ների գեղգեղանքներով, երգերով: Ամեն մի մարդ մի պակա-
սութիւն ունի. է՛, սրանք էլ իմ են, ի՛նչ անեմ:

— Այո՛, ասաց փոխ-արարողագետը, ամենը մարդ ճանա-
չում է ձեզ, ամեն մարդ գիտէ թէ զուք ինչ արժանիք ունէք:
Շահն էլ, որ սպանելու գործի մէջ լաւ հմուտ է, միշտ պար-
ծենում է նրանով, որ Պարսկաստանի ո՛չ մէկ թագաւոր իր
պէս զօրաւոր չէ եղած, որ իր հրամաններն իսկոյն և եթ կա-
տարւում են, և որ իր զօրութեան վրայ վստահելով՝ մտածում
է իր սուրբ միսի վրաստանի սիրտը: Օ՛, եթէ ուումները լսեն
որ զուք գնում էք վրաստան, այո՛, պարոն դահճագետ, եթէ
նրանք լսին թէ զուք ինչ նպատակ ունէք, նրանք իսկոյն կը
սկսեն իրանց այս աշխարհի հաշիւները մաքրել և պատրաս-
տուել միւս աշխարհը դնալու...

— Իհարկէ, սովբեր են ուումները, ասաց դահճագե-
տը կէս գծամնկելով, կէս վախենալով: Նրանք փոշի են, նրանք
ոչինչ են: Պարսիկների համար ուումների վրաստանը սիրելը
այնքան աննշան, այնքան թեթեւ բան է, ինչքան ինձ
համար՝ շապկիս մէջ մտած մի ճանճի դուրս քշելը: Է՛,
ճանճը երբեմն նեղացնում է ինձ, բայց չէ՞ որ եթէ ես
ուզեմ, ամենաթեթեւ շարժումովս կարող եմ ճանճին դուրս
քշել: Ա՛հ, ուումները ոչինչ են:

Յետոյ թողնելով այդ առարկան՝ նա դարձաւ գէպի ինձ
և ասաց.

— Շատ բարի, ես քեզ ընդունում եմ իմ ծառայութեան
մէջ, միայն թէ զու էլ այնքան սէր ունենաս վստօղի հոտի
հետ, ինչքան ես: Ով որ նասաղչի է, նա պէտք է Ռոսթամի
ոյժ, առիւծի սիրտ և վազրի կատաղութիւն ունենայ:

Նա մի-երկու բոպէ լաւ գննեց ինձ ըստ երևոյթին, շատ
հաւանեց իմ կերպարանքն ու կազմը: Յետոյ ինձ հրամայեց
գնալ փոխ-դահճագետի մօտ, որը ինձ պիտի տար իմ նոր
պաշտօնիս հարկաւոր եղած պիտոյքները և հրահանգներ տար
իմ անկէք գործերի մասին:

Երբ ես գնացի Նայիրի (փոխ-դահճագետի) մօտ, նա
խիտ զրազուած էր: Նա պատրաստութիւններ էր տեսում Շա-
հի ամառանոց գնալու համար: Գլուխը շատ խառն էր: Իր իշ-
խանութեան տակ գտնուող ծառաներին մէկին պատուէրներ
էր տալիս, միւսին յանդիմանում էր, մի ուրիշից տեղեկու-
թիւն էր հաւաքում կայն: Հէնց որ նա իմացաւ որ ես էի ըն-
տրուել յաջորդելու հանդուցեալ նասաղչուն, իսկոյն ինձ յան-
ձընեց նրա ձին ու հանդերձանքը, խստիւ պատուիրեց շատ մեծ

խնամք տանել նրանց, և սպանոնաց որ եթէ ձին սատկէր, ինձ միայն այն ժամանակ մի ուրիշը կը տրուէր, երբ ևս ցոյց տայի սատկածի պոչն ու կաշու այն մասը, որ ունի իր վրայ այն դրոշմը, որպիսին կրում են բոլոր արքունական ձիերը: Նա խոստացաւ տարեկան 30 թուման ոռճիկ տալ ինձ, նաև ձիս ու ուտելիքս:

Ես դեռ շարունակեցի ապրել հաքիմ բաշու տնում մինչև Շահի ամարանոց գնալը: Մարդիկ երբ լսեցին որ ևս նասաղչի եմ դարձել, սկսեցին յարգանքով ու մի աստիճան ակնածութեամբ վերաբերուել դէպի ինձ: Ինչ որ ինձ հարկաւոր էր, ևս բազարից ապտորիկ էի գնում: Ոչ մի խանութպան չէր համարձակուում կանխիկ դրամ պահանջել ինձանից:

Հաքիմ բաշու ծառայութեան մէջ եղածս ժամանակ ևս արդէն բաւական պիտոյքներ էի հաւաքել ինձ համար: Դրանց մի մասը պարզներ էին այս ու այն հիւանդից ստացուած, մի մասն էլ արդիւնք էր իմ ճարտակութեանն ու հնարագիտութեանը: Օրինակի համար, երբ ևս կարիք ունէի մի վերմակի, մի բարձի և մի դոշակի, պատահեցաւ որ մի հիւանդ, որը գտնուում էր մեր խնամատարութեան ներքոյ, մեռաւ, և ևս հաւատացրի նրա ընտանիքին, որ մոլեռանդ մուսուլմաններ էին, թէ նրա մահուան պատճառը մենք չէինք եղել, այլ նրա չարարախտ անկողինը. որովհետև, դժակը մետաքսից *) էր և անկողինը դէպի դէքլէն **) չէր դրուած: Այս խօսքերով ևս այնպէս դրդեցի նրանց, որ նրանք անմիջապէս դուրս շարտեցին բոլոր անկողինը, և ևս իւրացրի այն:

Ինձ հարկաւոր էր մի հայելի: Դարձեալ պատահեցաւ որ դեղնութիւն կոչուած հիւանդութիւն ունեցող մի միրզա մի անգամ նայեց իր հայելուն, բայց նրա դէմքը այնքան այլանդակուած երևաց իրան, որ նա դարհուրեց: Ես հաւատացրի նրան, որ ոչ թէ իր դէմքն էր տղեղացել, այլ հայելին փչացած լինելով տգեղ է ցոյց տալիս: Հաւատարով ինձ, նա իսկոյն դէն գցեց հայելին, և ևս էլ իւրացրի:

Կրօնական ծխակատարութիւնները մէջ ոչ ոք այնքան խիստ ու ճշտապահ չէր, ինչքան էր Միրզա Ահմադը: Մեծ ըզգուշութեամբ նա միշտ հետու էր պահում իրան այն բոլոր բաներից, որ արգելուած կամ անմաքուր էին համարուում: Ինչ և է, ինձ մի զոյգ սնդուկ էր հարկաւոր: Հաքիմը մի զոյգ ունէր, և աչքս նրանց վրայ էր. բայց նրանց իւրացնելու հա-

*) Բարեղաշտ մուսուլմանները պիղծ են համարում մետաքսը:

**) Աղօթարանի կողմը:

մար մի հնար չէի կարողանում գտնել: «Եթէ ես դէրվիշ Սա-
ֆարի կէս հնարագիտութիւնն ունենայի», մտածեցի ես, «ար-
դէն սեփականացրած կը լինէի այդ սնդուկները և ի-
րերս մէջները տեղաւորած»: Յանկարծ մի միտք ծագեց զըլ-
խումս: Թէ՛հրանում գտնուող բազմաթիւ շներից մէկ քածը հէնց
նոր ցնկնիլ^{*)} էր մեր տան մօտ գտնուող մի կիսակործան կամա-
րի տակ: Շատ հնարքներ գործ դնելուց յետոյ վերջապէս ինձ
յաջողուեց աննկատ վերցնել քածին ու իր լակոտներին և տե-
ղաւորել նրանց սնդուկների մէկի մէջ. միւսի մէջ էլ զրի մի
կոյտ հին ոսկորներ:

Հարիմ բաշին պատրաստում էր իր ճանապարհորդական
պիտոյքները: Մնդուկները հարկաւորուեցին: Երբ ծառաներից
մէկը նրանց մօտ գնաց և մէկը բացաւ, շունն իր ձագերով
միասին այնպիսի կողկանձիւն բարձրացրեց, որ նա զարհուրած
ու սրտատրոսի ետ վազեց հարիմ բաշու մօտ և յայտնեց նրան
իր տեսածը: Վերջինս իր բոլոր տնեցիների հետ, որոնց մէջ
էի և՛ ես, շտապեց սնդուկների մօտ: Բոլորն էլ զարմացան թէ
ինչպէս էր պատահել, որ շները տեղաւորուել էին սնդուկի
մէջ: Միւս սնդուկն էլ բանալով, մի կոյտ ոսկորներ գտան նը-
քա մէջ: Բոլորն էլ ապշեցին, զարմացան և յետոյ սկսեցին զա-
նազան ենթադրութիւններ անել: Շատերը կարծում էին թէ
մի շատ չարագուշակ հանգամանք էր որ աղէտ պիտի բերէր
հարիմ բաշու տան վրայ:

Նրանցից մէկն ասաց.

— Մա մի նշան է, որ խանումը հարամզաղէներով^{**)} կը
լցնի այս տունը:

Մի ուրիշը ասաց.

— Շան ձագերը գեռ կոյր են. տայ Ալլահը որ մենք և
հարիմ բաշին չկուրանանք:

Միրզա Ահմադը միայն սաստիկ զայրացու իր սնդուկ-
ների պղծուելու վրայ:

— Նրանք պղծուած են, ասաց նա զգուանքով: Շուտ դուրս
ձգեցէք:

Հարիմ բաշու հրամանն իսկոյն կատարուեց, և վերջապէս
սնդուկներն էլ իմ սեփականութիւնը դարձան, և ես իմ ի-
րերը տեղաւորեցի նրանց մէջ:

*) Ծնել (ոչ-սուրբ կենդանիների վերարեմամբ):

***) Հարամզաղէ նշանակում է անհարգատ դատի, պոռնիկորդի:

ԳԼ. ԼԳ.

Հաջի Բարան Շահին ուղեկցում է դեպի ամարանոց:

Շահի ամարանոց գնալու օրը աստղագէտները նշանակել էին Ռէքի-էլ-աւալ ամսի 21-ը: Այդ օրը արեւածագից կէս ժամ առաջ Շահը ճանապարհուեց և ուղղակի դնաց մինչև Սուլէյմանիէ, Թէհրանից ինն ֆարսաղ դուրս: Բոլոր իր հետևակ զօրքերին հրամայուել էր այս ինչ ժամին նախապէս պատրաստ լինել Սուլթանիէում: Շահին ուղեկցեցին իր թիկնապահ զօրախումբը, թնդանօթածիզները, հեծելազօրքը և շատ պաշտօնեաներ: Այդ օրը Թէհրանը զրկուեց համարեա իր $\frac{2}{3}$ բնակիչներից:

Ամեն մարդ և ամեն բան շարժման մէջ էր: Կարծես թէ Թէհրանի բնակիչները մեղուների պէս, ընդհանուր համաձայնութեամբ տեղափոխուում էին մի ուրիշ վայր: Բազմաթիւ ուղտեր և ջորիներ, որոնց վրայ բարձուած էին անկողիններ, վրաններ, կարասիք, ուտելիք և այլն, անցնում էին Թէհրանի զանազան փողոցներից և բարձրացնում էին փոշու խիտ ամպեր: Նրանց դանդակների ձայները, լսառնուած ջորեպանների և ուղտապանների հոյ-հոյների հետ, օդը թնդացնում էին:

Շահի ճանապարհուելու առաւօտը ես կարգապահ նշանակուեցի Թէհրանի «Իարվազա Ղազրին» կոչուած դրան մօտ: Իմ պարտքս էր ճանապարհը ազատ պահել խոչընդոտներից և թոյլ չտալ գիւղացիներին իրանց բեռները այդ դարվազայից անց կացնել, ինչպէս անում են ամեն առաւօտ:

Քաղաքի բոլոր սաղկաններին խիտ պատուէր էր արուած ջուր շաղ տալ բոլոր այն փողոցները, որտեղից Շահը պիտի անցնէր, և ամեն նախազգուշութիւն արուել էր՝ նրա քաղաքից դուրս գնալը ըստ կարելոյն բարեյաջող և բարերաստ դարձնելու: Ոչ մի պառաւ կին չպիտի տեսնուէր ճանապարհի վրայ, մի գուցէ Շահի աչքը նրա վրայ ընկներ և մի հարուած ստանար նրա չար աչքից:

Ես այնպէս քաջութեամբ և խստութեամբ մարդկանց քըշում էի ճանապարհից որ ինքս էլ զարմանում էի ինձ վրայ: Ես այնպէս անողորմ կերպով, աջ ու ձախ խփում էի մարդկանց գլուխներին ու մէջքերին որ իմ պաշտօնակիցներն ապշեցին, զարմացան թէ՛ ես ինչ դև էի որ ընկել էի իրանց մէջ: Իհարկէ՛ իմ նպատակն էր համբաւ բարձրացնել քաջութեան համար այն յոյսով որ այդ համբաւն ինձ աւելի բարձր պաշտօնի կ'արժանացնէր ասպազայում:

Վերջապէս թափօրն սկսեց առաջ շարժուել: Մի թնդանօթի բոմբին յայտարարեց Թէհրանի ժողովրդին որ Շահը ճանապարհ է ընկնում: Նամարդ խան դահճապետը և մի խումբ ձիաւորներ այս ու այն կողմն էին քշում իրանց ձիերը՝ ճանապարհը խոչընդոտներից մաքրելու համար:

Ամենից առաջ գալիս էին մուստիկները, յետոյ գոհարներով, թանգազին շալերով և դիպակով զարդարուած եղաքները, յետոյ շաթիրները, յետոյ Շահը, յետոյ իր վեզիրները, և ամենից վերջը՝ հեծելազօրքի մի մեծ խումբ:

Շահին ուղեկցող բոլոր պետական պաշտօնեաներին հետևում էին իրանց ծառաները, սրոնցից շատերն էլ ունէին իրանց ծառաները: Եթէ հաշուելու լինենք բոլոր միրզաներին, ծառաներին, դայլամչիներին, մէյլմարներին, ջորեպաններին, ուղտապաններին և տասն հազար ուրիշ հետևորդներին, դուք կ'իմանաք ու կը զարմանաք թէ որքան մեծ էր այն բաժութիւնը որ Շահի հետ դուրս գնաց «Իրավագա Ազգերին» գոնից, որտեղ եւ կարգապահութիւն էի անում:

Երբ Շահը մօտեցաւ դարվազային, և ես նայեցին նրան, մի սարսուռ անցաւ ինձ վրայ: Նրա երկար միրուքը, որ հասնում էր մինչև գօտին, և նրա կերպարանքը, որ արտայայտիչ էր սոսկալի բռնակալութեան, այնպէս սարսափեցրեց ինձ որ ես ահուզողով մինչև գետին խոնարհուեցի նրա առջև, այն, մի մարդու առջև, որ իր գլխի մի թեթև շարժումով կարող էր հէնց տեղնուտեղը վիզս կտրել տալ:

Երբ ամբողջ թափօրը քաղաքից դուրս գնաց, ես կամաւ սպասեցի իմ տեղում մի չիբուխ ծխելու «Իրավագայ Ազգերին» պահապանների հետ: Մինչգեռ նստած ծխում էի, Շահի վեզիրներից մէկի կանայքը, որոնց արտօնութիւն էր շնորհուել ամաւրանոց գնալու, եկան անցան մեր մօտից: Նրանց տեսնելով, ա՛խ, ես կրկին յիշեցի իմ... իմ... Ձինաբին: Մի խոր հառաչանք արձակեցի, երբ մտածեցի նրա գրութեան վրայ, որը ինձ թւում էր թէ շատ թշուառ պիտի լինի: Ինչպէս ես տեղեկացել էի Նուր-է-Ձէհանից, նա ուղարկուել էր Թէհրանը շրջապատող լեռներից մէկի ստորոտում գտնուող մի ամաւրանոց (որ Շահին է պատկանում) սրբը, երգ և խաղ սովորելու: Շահը հրամայել էր նրան նախքան իր վերադարձը աշխատել սովորելու այդ բաները, որպէսզի իր վերադարձին նա կարողանար իր ներկայութեամբ խաղալու և երգելու պատուին արժանանալ:

Ձիբուխս ծխելուց յետոյ ես ձիս հեծայ և ճանապարհ ընկայ Շահին հասնելու: Ինչեւէ, այդ օրը մթնեց, և ես ազատուե-

լով իմ գործից, գնացի դահճապետին յատկացրուած իջևանա-
վայրը, որտեղ մի փոքրիկ վրան էր պատրաստուած ինձ և հինգ
ուրիշ նասաղչիներին համար, որոնց վիճակուած էր ինձ ընկե-
րակցել ճանապարհին:

Բացի դահճապետի նայիրից մի փոխ-նայիր էլ կար,
որի մասին պիտի խօսեմ իմ պատմութեան մէջ, որովհետև
Նրա միջոցով էր, որ ես իվերջոյ յառաջադիմեցի կեանքի մէջ:
Նրա անունը Շիր Ալի էր, ծագումով բէգ և ծննդավայրով
Շիրազցի: Մենք շուտով մտերմացանք և սերտ բարեկամներ
դարձանք: Գիտէք ինչպէս. ես իմ ընտուր գրաւիչ լեզուով
շատ դուր եկայ նրան. յետոյ մի տաք օր էլ, երբ ես սաստիկ
ծարաւ էի, նա մի կտոր ձմերուկ տուեց ինձ. դրա դիմաց ես
մի անգամ կրակ դրի նրա շէրուխի վրայ: Մի անգամ էլ, երբ
ես չափից աւելի վրաւ էի կերել և հետևապէս հիւանդացիլ էի,
նա մի գրչահատով բազուկս ծակելով արիւն հանեց և առող-
ջացրեց ինձ: Սրա դիմաց ես մի ուրիշ անգամ նրա ձին
բժշկեցի մի քիչ ծխախոտի ջուր ածելով նրա փորի մէջ: Է՛,
այսպիսով մենք շատ մտերիմ ընկերներ դարձանք:

Շիր Ալին երեք տարով մեծ էր ինձանից: Նրա հասակը
բարձր էր, կազմը դեղեցիկ, կուրծքը լայն, դօտատեղին նեղ
և մորուքը կարճ ու ձուածկ: Նրա երկու զովթէրը (զանգուր-
ները) ոլորուած էին ականջների ետեւում, ճիշտ այն դեղեցիկու-
թեամբ, ինչպէս որթը փաթաթուում է պարտիզի պատի վրայ:
Երկար ժամանակուայ փորձառութիւնից նա լնւ գիտէր
թէ ինչպէս պէտք է վարել իր պաշտօնը և ինչ հնարագիտու-
թեամբ արդիւնք քաղել նրանից:

Մի անգամ նա ինձ ասաց.

— Դու մի կարծիր որ մենք՝ Շահի ծառաներս ապրում
ենք լոկ նրա տուած ոռճկով: Ո՛չ, նրա տուածը մի մեծ բան
չէ: Եթէ մենք մեր ճարպկութեամբ և հնարագիտութեամբ
մարդկանցից փող չկորդենք, չենք կարող ապրել: Օրինակի հա-
մար, հէնց մեր իշխանաւորը—դահճապետը տարեկան մէկ հազար
թուման ոռճիկ է ստանում, այն էլ շատ անգամ կանոնաւոր կեր-
պով չէ տրուում նրան, սակայն նա տարեկան աւնուաղն 5—6 հա-
զար թուման փող է մսխում: Ինչպէ՞ս է նա կարող այդքան փող
մսխել, եթէ միջոցներ ձեռք չառնի հանգամանքներից օգ-
տուելու և իր ճանկն ընկած մարդկանց կողոպտելու: Յաճախ
պատահում է, որ մի խան յանցաւոր է դառնում Շահի առջև.
նա իսկոյն յանձնուում է դահճապետին, որը նրա խոստացած
կաշառքի չափով պատժում է նրան: Մի ուրիշ օրինակ տամ
քեզ. պատահում է որ մի ապստամբի աչքերը հանելու են:

Գահնապետը նայում է ապստամբի խոստացած կամ տուած փողին. եթէ կաշառքը անբաւարարացուցիչ է, դաշոյնով է հանում, իսկ եթէ գոհացուցիչ է, գրչահատի ծայրով է հանում, իբր թէ աւելի փափուկ գործիքով և աւելի մեղմութեամբ: Պետական պաշտօնեաներից շատերը, նոյնիսկ վէզիրը, նրան մեծ-մեծ ընծաներ են տալիս, որպէսզի եթէ երբևիցէ Շահը բարկանայ իրանց վրայ և դահնապետին յանձնէ, նա՛ դահնապետն անողորմ կերպով չպատժէ նրանց:

«Վերջապէս, շարունակեց Շիր Ալին, որտեղ որ մի յանցաւորի պատժելու խնդիր կայ, այնտեղ մեծ շահ կայ դահնապետի համար. այդտեղից ոչ միայն նա է շահուում, այլ նաև իր բոլոր ստորադասները աստիճանաբար: Նախ քան իմ փոխնայիր դառնալը երբ հերթն ինձ էր ընկնում Ֆալախկային ենթարկելու մի յանցաւորի, շատ անգամ յանցաւորը փող խոստանալով ինձ՝ գուրթ էր շարժում սրտումս, և ես փոխանակ նրա ոտներին զարկելու՝ Ֆալախկային էք հարուածում: Ինչ անցեալ տարի էր որ Շահը խիստ բարկացաւ պետական քարտուղարի վրայ և հրամայեց ինձ Ֆալախկայի ենթարկել նրան. ի պատիւ նրա կոչմանը մենք մի փոքրիկ գորգ փռեցինք որ նա պառկէր վրան և սկսեցինք գործը: Երբ նախքան նրան հարուածելը ես և իմ պաշտօնակիցը հանում էինք նրա շորերը, նա փափաւով (որպէսզի Շահը չլսէր, որովհետև նրա ներկայութեամբ էր պատժւում) մեզ ասաց:

— Ի սէր ձեր մօրը, որ ձեզ ծնեց, շատ չզարկէք ինձ. իւրաքանչիւրիդ 10 թուման կը տամ. այն, 10 թուման, եթէ չէք զարկիլ ինձ:

«Նրա ոտները Ֆալախկայի հանգոյցի մէջ դնելով՝ սկսեցինք գործը, և որպէսզի մեզ չմասնէինք, սկզբում շատ խիստ հարուածներ տուինք նրան. մի խօսքով, այնքան տանջեցինք, մինչև նա մի կերպով մեզ հասկացրեց, թէ պատրաստ էր այնքան փող առլ մեզ, որքան մենք էինք կամենում: Յետոյ մենք մեղմացրինք, և վերջը միայն Ֆալախկային էինք զարկում. սակայն մեծ ճարպկութիւն և հնարագիտութիւն գործ գրինք, որպէսզի Շահը չհասկանար որ մեր և յանցաւորի մէջ մի որոշ պայման կար: Ոեղճ յանցաւորը հարուածներ կըրելու ժամանակ իր խոստումները խառնում էր իր անխու վանխերի հետ, և մօտաւորապէս այսպէս էր ասում.

— Այ աման, աման, աման... Ողճացէք ինձ... ի սէր Մարգարէի, խնայեցէք ինձ—տասներկու թուման: Ա՛խ, մեռայ... ի սէր ձեր հօր, ձեր մօր... վայ... աման — տասնհինգ թուման: Ա՛խ, մի զարկէք... աման... սիրէք Շահի գլուխը... անխ — քսան

թուման: Վնյ... անխ... ի սէր իմամների... ի սէր—երեսուն
թուման: Աման... ի սէր Մարգարէի... անխ... մեռայ—երեսուն,
քառասուն, յիսուն, վաթսուն... անխ, խնայեցէք—եօթանասուն,
հարիւր, հազար... աման... ինչքան ուզում էք:

«Երբ որ պատժելու գործը վերջացաւ, նա նոյնքան ա-
րագ—արագ իջեցրեց իր խոստացած դրամի թիւը, ինչքան ա-
րագ բարձրացրել էր հարուածների տակ. այնպէս որ մենք
բաւականացանք միայն նրա առաջին խոստացածովը որ նա
ստիպուած տուեց, որովհետև վախենում էր որ եթէ այդքանն
էլ չտար, միւս անգամն էլ չէր պրծնի մեր ձեռքից. նա գիտէր
որ միւս անգամ մենք ուղղակի կը սպանէինք իրան»:

Իր այս պատմութեամբ Շիր Ալին այնպէս պարզ կեր-
պով ցոյց տուեց ինձ իմ պաշտօնի օգտաւէտութիւնը, որ դրա-
նից յետոյ ես շարունակ ֆալախկա և փող էի երազում: Ամ-
բողջ օրը ես շրջում էի՝ մի երկար ճիպոտ ձեռքումս խաղացը-
նելով: Որտեղ որ մի որևէ բան էի գտնում, որ փոքրիշատէ
ոտի նմանութիւն ունէր, սկսում էի լուրջ կերպով հարուածել
նրան, և այդպիսով ձեռքս այնքան վարժուեց որ մի մարդու
ոտներին խփելիս ես կարող կը լինէի իւրաքանչիւր մատին
առանձին—առանձին հարուածներ տալ:

Իմ բնաւորութեան մէջ անգթութիւն չկար, ոչ էլ ես քաջ
կամ կատաղի էի: Ես շատ զարմանում էի, թէ ինչպէս պատա-
հեց որ այդպէս յանկարծակի մի կատաղի վազը դար-
ձայ: Բայց ինչու էի զարմանում: Իրողութիւնը այս է:
Ուրիշների օրինակը միշտ պօրեղ տպաւորութիւն էր թողնում
մտքիս և հոգուս վրայ: Ես ապրում էի այնպիսի մթնոլորտում,
ուր տիրում էր բռնութիւնը, անիրաւութիւնը և ոյժը: Բացի
ականջ կտրելու, քիթ ճղելու, աչքեր հանելու, յանցաւորին
մէջ տեղից երկու կէս անելու և ոճրագործներին թոնրի մէջ
խորովելու պատմութիւնից կամ գործողութիւնից, ես ուրիշ
ոչինչ չէի լսում կամ տեսնում: Հետևապէս սիրտս այնքան
քարացել էր, որ տեղն ընկած ժամանակ հօրս էլ կը մոր-
թէի:

ԳԼ. ԼԴ.

Հաջի Բաբան մի օրինակ է տալիս պարսկական բռնակալութեան:

Շահը վերջապէս հասաւ իր ամարանոցը, որ շինուած էր
հին քաղաքից ոչ շատ հեռու մի բլրի վրայ, և որի առջև ըն-

կած էր մի լայնատարած դաշտավայր՝ այժմ ծածկուած բազմաթիւ վրաններով: Տեսարանը շատ գեղեցիկ էր, և ես, իբրև նասաղչի, մեծ ինքնարաւականութիւն էի զգում, երբ իմ ներկայ զրուիիւնը համեմատում էի այն թշուառ զրուիեան հետ, որ ես ունեցել էի թիւրքմէնների բանակում:

Վերջապէս հիմայ ես մի մարդ եմ ինձ համար, մտածեցի ես: Առաջները ես ձեռնուղներից մէկն էին, սակայն այժմ ես ինքս եմ ձեռնում ուրիշներին: Ես այժմ օրինակն եմ այն ներգործական և միևնոյն ժամանակ կրաւորական բայի, որով Սպահանում իմ ուսուցիչ մոլլան այնքան շիտթեցնում էր ինձ, երբ նա աշխատում էր արաբական լեզուի բայերի մասին մի գաղափար մտցնել գլխիս մէջ: Տոյ Ալլահը, որ ես առիթ ունենամ բարի տրամադրութիւնս ազացուցանելու դէպի իմ նրմանները:

Ինչ այսպէս մենախօսում էի, երբ Շիր Ալին ինձ մօտ զաւով ասաց.

— Մեր բախաը հաշտ է մեզ հետ. դու պիտի շուտով ճանապարհորդակցես ինձ, և ինչալլա՞հ երկուսիս բանն էլ լաւը լինի: Դու պիտի իմանաս, որ երբ շահը ամբարնոց է գալլիս, նրա բանակի համար հարկաւոր եղած պաշարը հաւաքուած է այստեղի մերձակայ գիւղերից: Ինչպէս երևում է, Սաղ Սաֆար անունով գիւղը, որ ընկած է այստեղի և Համազանի միջև, այս տարի չէ ուղարկել իր բաժին պաշարը, որովհետև, ինչպէս գիւղացիքն ասում են, այս տարի մի շահագոյ է իր բոլոր հետևորդներով գնացել է այդ գիւղի շրջակայքում որսորդութիւն անելու, և մի քանի օր գիւղումը բնակուելով՝ բոլորովին դատարկել է գիւղացիների ամբարները: Ինձ վերջապէս հրամայուած է այդ գիւղը գնալ ստուգելու գիւղացիների զրուիիւնը և քնանդխտղային (գիւղապետին) և ձեռուհասներին գահճապետի մօտ բերելու: Արդ, որովհետև դու իմ մտերիմ բարեկամն ես, ես աշխատել եմ յաջողացնել որ դու ընկերակցես ինձ, թէպէտ միւս նասաղչիները շատ դժգոհ են որ իրանց չեմ ասնում: Ուրեմն, հանջի, դու պիտի պատրաստուես ճանապարհուելու ինձ հետ երեկոյեան ազօթքից անմիջապէս յետոյ, որովհետև ես գիտաւորութիւն ունեմ վաղն առաւօտ այստեղ լինելու:

Ես չափազանց ուրախացայ որ ինձ յաջողուած էր այսպէս շուտով տաք դործի մէջ ընկնել և թէպէտ լաւ չգիտէի թէ Շիր Ալին ինչ ծրագիր էր պատրաստել իրան յանձնուած գործից օգտուելու, այնուամենայնիւ բաւական խելք ունէի հասկանալու որ յաջողութեան մի լայն ասպարէզ բաց էր մեր

առջև, որից մենք մեր խոհեմութեամբ ու ճարպկութեամբ կարող էինք մեծ օգուտներ քաղել:

— Ես չմր կը համարեմ մեր աստղը, ասացի ես, եթէ շահագաղէն ոչինչ բան թողած չլինի մեզ համար այդ գիւղում: Տեսնենք ինչպէս կը լինի:

Այս ասելով՝ ես գնացի ձիուս մօտ, որ կապուած էր մեր վրանների մօտ: Նրա երասանը գլխիցը հանելով և ոտնակապը բանալով՝ ասացի.

— Այ գահան, հիմայ դու աղստ ես քաջելու, ոտներիդ վրայ կանգնելու և անելու ինչ տեսակ չարութիւն որ ուզում ես: Այդպէս է անում ամին մի պարսիկ ծառայ, երբ նա աղատում է իր աղայի ծառայութիւնից:

Շիր Ալին և ես արևմտին ճանապարհուեցինք: Մեզ հետ ունէինք մի տղայ իբրև սպասաւոր և մի ջորի, որի վրայ բարձել էինք մեր անկողինը, ձիերի ծածկոցները կայլն:

Այն օրից երբ ես մտել էի զինուորական պաշտօնի մէջ, ես իմ անուան վրայ աւելացրել էի ըէգ պատուանունը, այնպէս որ ես Հաջի Բարա ըէգ էի կոչւում:

Այժմ էլ ընկերներիցս մէկից մի արծաթէ շղթայ փոխ առի ձիուս վիզը գցելու, նաև մի գոյգ սիրուն ատրճանակ՝ ինձ համար: Իհարկէ, այս փոխառութեան համար ես խոստացայ ընկերիս համար մի լաւ սօղաթի (ընծայ) բերել, եթէ մեր հունձը առատ լինէր:

Ամբողջ գիշերը ճանապարհորդելով մենք Սաղ Սաֆար հասանք ճիշտ այն ժամանակ, երբ գիւղացի կանայքը գոմերից դուրս էին անում իրանց հոտերը, և տղամարդիկ ծխում էին իրանց չիբուխները և պատրաստում դաշտերը գնալու:

Հէնց որ գիւղացիները մեզ հեռուից տեսան, մեծ շփոթ ընկաւ նրանց մէջ: Կանայքն իսկոյն լռեցին և ծածկեցին իրանց երեսները. տղամարդիկն էլ ոտքի ելան:

Երանի՛ թէ ընթերցողը կարողանար երևակայել թէ Շիր Ալին ինչ սոսկալի կերպարանք ստացաւ, երբ մենք մօտեցանք գիւղին: Նա այնքան փքուեց, այնպիսի դաժան դէմք ցոյց տուեց, որ տեսնողը կարծում էր թէ նա հէնց Նամարդ խան դ.սհնապեան ինքն էր: Մօտենալով գիւղացիներին՝ նա հրամայական տոնով հարցրեց.

— Ո՛ւր է ձեր քեանդխողան:

Սպիտակ մորուքով, համեստ վարքով և պարզ զգեստով մի ծերունի առաջ եկաւ և ասաց.

— Սաղաղութիւն ընդ ձեզ, աղա, նուաստս եմ այս գիւղի քեանդխողան, ձեր ծառան եմ: Յոյս ունիմ որ ձեր քայլերը բա-

բերաստ են և ձեր ստուերը մեր գլխի վրայ կը լինի: Բիւսմիլլա՛ն, քիսմիլլա՛ն, աղս, բարով էք եկել:

Բիւսմիլլա՛ն բառը լսելով՝ գիւղացիներէց մի քանիսը խոհոյն ստաջ եկան և օղնեցին մեզ իջնել մեր ձիերից: Իհարկէ, մենք էլ որքան կարողանում էինք, ծանր էինք պահում մեզ և այնպէս էինք ձեռացնում, որ իբր թէ մենք շատ մեանձնաւորութիւններ էինք:

Քեանդխողայի տան դրան առջև մի փոքրիկ գորգ փռուեց, որի վրայ մենք հրաւիրուեցինք հանգիստ առնելու, մինչև տան մէջ մի սենեակ պատրաստուէր մեզ համար: Գիւղի բոլոր տղամարդիկը շրջապատեցին մեզ: Քեանդխողան ինքը իր ձեռքով հանեց մեր կոշիկները, որով նա ցոյց տուեց մեզ այն քաղաքավարութիւնն և ուշադրութիւնը, որ գիւղացիք սովորաբար ցոյց են տալիս իրանց հիւրերին, յատկապէս մեզ պէս բարձրաստիճան անձնաւորութիւններին: Շիր Ալի բէգին մի զայլան հրամայեցին, որը նա վեհանձնաբար ստացաւ և քիչ ձրևուց յետոյ ասաց.

— Դու որ այս գիւղի քեանդխողան ես, իմացիր որ Շահն է ինձ ուղարկել այստեղ. կրկնում եմ, Շահն է ինձ այստեղ ուղարկել իմանալու թէ ինչ է պատճառը որ այս տարի այս գիւղը չէ ուղարկել իր բաժին պաշարը Շահի ամարանոցի համար: Պատասխան տուր ինձ և եթէ կարող ես՝ երեսդ սպիտակացրու, պարզերես եղիր:

— Աչքիս վրայ, աչքիս վրայ, սղա, պատասխանեց քեանդխողան. ինչ որ ես առաջուց ասել եմ, այժմ էլ նոյնը պիտի կրկնեմ: Այս բոլոր մարդիկը գիտեն, որ ես ինչ ասել եմ՝ սուտ չէ եղել: Եթէ սուտ եմ ասել, թող հէնց այս բողէիս աչքերս կուրանան: Ազատում եմ, ով նասաղչի, դուք, Ալլահի օրհնութեամբ, մարդ էք բառի բուն նշանակութեամբ: Դուք նրբահայեաց, լսելօր և իմաստուն մարդ էք: Դուք մուսուլման էք և անշուշտ վախենում էք Ալլահից: Ես, ըսււ լիցի, եթէ ճշմարտութիւնից դուրս մի խօսք ասեմ: Ես կը բացատրեմ ձեզ թէ ինչ է պատահել մեզ, թէ ինչ գրութեան մէջ ենք մենք, և կը թողնեմ ձեր բարի դատողութեանը որ ինչ որ...

— Լսա, լսա, շուտ անցէք բուն խնդրին, ասաց Շիր Ալին: Ես Շահի ծառան եմ. ինչ որ Շահը վճռել է՝ այն պէտք է գործադրուի:

— Ծշմարիտ է, սղա, դուք շատ ճշմարիտ էք հրամայում, պատասխանեց քեանդխողան. բայց խնդրում եմ, հաճեցէք լրտեսել իմ պատմութիւնը: Երեք ամիս սրանից առաջ, երբ ցորենը մօտաւորապէս մէկ դաղ բարձրութեան էր հասել և ամբողջ

գիւղը թնդում էր գառների մայրեններով, շահագոյէ Ոսրաբ Ղուկի Միրզայի ծառաներից մէկը մեր գիւղն չեկաւ և յայտնեց մեզ, որ իր աղան միւս օրը պիտի գար բնակուելու այստեղ, որպէսզի մեր շրջակայքում գտնուող բազմաթիւ կաքաներից, վայրի այծերից և հաւերից որսար: Նա պահանջեց մեզանից մեր գիւղի ամենալաւ տները պատրաստել Շահագոյէի և նրա հետևորդների համար: Նա հրամայեց մեզ մի քանի ընտանիքի դուրս քշել իրանց տներից և շուտով տեղ ու անագին քանակութեամբ պաշար պատրաստել: Երբ այս լուրը տարածուեց մեր գիւղում, բոլոր գիւղացիները զարհուրեցին, և տեսնելով որ իզուր կը լինէր դիմադրել շահագոյէին, մենք վճռեցինք հեռանալ մեր տներից և պատսպարուել մեր լեռներում, մինչև սև օրն անցնէր: Եթէ, ով նասաղչի, դուք տեսնէիք թէ խեղճ գիւղացիները ինչպէս սրտակտուր թողին ինչ որ այս աշխարհում նրանք ունէին, ձեր սիրտը կը ճմլուէր և ձեր լեարդը ջուր կը դառնար:

— Ինչ ես նշանակում, գոռաց Շիր Ալին. դուք Շահի գիւղը ամայացրել էք և այժմ ինձանից խնդրում էք որ զբթութիւն անեմ ձեզ, ձեզ՝ որ թողել, հեռացիլ էք ձեր գիւղից, փախտականներ էք դարձել: Ո՛չ, դուք գթութեան արժանի չէք, և եթէ Շահը լսէ ձեր արածը, նա ձեզ աւերիչներիդ, փախտականներիդ բոլորիդ զլխատել կը տայ:

— Աղաչում եմ, աղանասաղչի, ասաց քեանդխողան, աղաչում եմ, լսեցէք իմ պատմութիւնը, լսեցէք մինչև վերջ: Մի քիչ մեղմացէք, խնդրեմ, և աղանաքիս ակամջ դարձրէք: Մենք մեր բոլոր ունեցածը, ինչքան որ կարողացանք՝ բարձեցինք մեր տաւարների վրայ և գնացինք լեռները, որտեղ մենք պահուեցինք մի անձաւի մէջ, որի մօտից անցնում էր մի փոքրիկ առու: Գիւղումը մնացին միայն երեք պառաւ հիւանդ կանայք և կատունները:

— Հնչի Բաբա բէգ, դու լսում ես ինչ է ասում այս մարդը, ասաց Շիր Ալին դէպի ինձ դառնալով: Տես, իրանք իրանց բերանով խոստովանում են որ ինչ արժէքաւոր բան որ ունեցել են, տարել պահել են լեռներում և շահագոյէի համար թողել են միայն կատուններին և երեք պառաւ, հիւանդ կիներին: Լաւ, ասաց նա քեանդխոյային, շարունակիր, մինչև տեսնեք ինչպէս է վերջանում պատմութիւնդ:

— Մենք, շարունակեց քեանդխողան, շուտ-շուտ լրտեսներ էինք ուղարկում մեզ համար լուր բերելու մեր գիւղից: Միւս օրը, կէսօրին մօտ, շահագոյէն գիւղը մտաւ և երբ նա տեսաւ որ մենք փախել էինք, սաստիկ զայրացաւ: Նա հրա-

մայից իր ծառաներին տները խուզարկել: Հրամանը իսկոյն կատարուեց, ամեն քունջուպուճախ խուզարկուեց, սակայն ոչինչ չգտնուեց, ոչ որ չդիմադրեց խուզարկողներին: Բայց երեք պառաւաններից մէկը, որ մինչև այդ ժամանակ բաւական ստողջացել էր, դուրս էր եկել նրանց առաջ և այնքան մեծ յանդիմութեամբ հայնոյի էր նրանց որ նրանցից ոչ մէկը չէր համարձակուել դիմադրել նրան: Շահագոյէն ստիպուած՝ մարդիկ ուզարկեց մեր հարկան դիւղից պաշար բերելու և ինքն էլ իջաւ մեր անուս: Մեր գիւղում որտեղ ցորեն կար, նրա մարդիկը քաղեցին, իբրև վառելիքայտ նրանք այրեցին մեր երկրագործական փայտէ գործիքները և երբ դրանք էլ վերջացրին, քանդեցին, մեր դռները, պատուհանները և մինչև անգամ տան դերանները: Նրանք բաց թողեցին իրանց ձիերին մեր ցորենների մէջ և անծ քանակութեամբ էլ քաղեցին իրանց հետ տանկու համար: Մի խօսքով, նրանք բոլորովին աւերեցին մեր գիւղը, ոչինչ չթողեցին մեզ համար: Այժմ մենք ոչ փող ունինք, ոչ հահուստ, ոչ տաւար, ոչ ուտելիք, ոչ ինչ, ոչ ինչ չունինք: Բացի Ալլահից, որ վերևումն է, բացի ձեզանից, ով աղա նասաղչի, մենք ոչ մի ուրիշ պաշտպան, ապաստան և յոյս չունինք:

Երբ քեանդխողան վերջացրեց իր պատմութիւնը, Շիր Ալի բէգը վեր ցատկեց իր տեղից, յարձակուեց ծերունու վրայ և բռնելով նրա մօրուքից՝ դռաց.

— Ձեռ ամաչում, սնուպխան պառաւ. ամօթ չէ՞ քեզ պէս մի սպիտակահեր մարդու համար այդպէս ստեր ասել: Դու ինքդ մի քանի բոպէ առաջ ինձ ասացիր որ ձեր բոլոր արժէքաւոր բաները փոխադրել էք սարերը, և այժմ ասում ես թէ դուք թալանուէլ էք, ոչինչ չունէք: Բացարձակ ստախօսութիւն ես անում դու: Դու կարծում ես որ մենք այսքան նեղութիւն ենք կրել, այսքան ճանապարհ ենք եկել, որ դուք մեր մօրուքների վրայ ծիծաղէք, հա՛. եթէ դուք այդպէս էք կարծում, չարաչար սխալուում էք: Դու, ազն քեանդխողա, երեւի դեռ չես ճանաչում մեզ: Մենք այնպիսի մարդիկ ենք, որ մեր քնած ժամանակ մեր մէկ աչքը բաց է, միւսը փակուած: Աղուէսը որ իր բնից դուրս է գալիս, մենք իմանում ենք: Եթէ դու կատու ես, մենք կատուների հայրերն ենք: Եթէ... է՛հ, դու դեռ շատ երկիրներ պիտի շրջես, շատ բաներ պիտի տեսնես սովորես, մօրուքդ դեռ շատ պիտի երկարսնայ, մինչև որ կարողանաս մեզ խաբել:

— Ո՛չ, մեղմ, մեղմ Աստուծոյ, բացաղանչեց քեանդխողան. քան լիցի, եթէ ես մի բոպէ մտածել կամ մտածում եմ

ձեզ խարել: Ես ո՞վ եմ որ համարձակուեմ ձեզպէսներհետ խաղալ: Մենք Շահի ուայեաթներն (հպատակները) ենք, ինչ որ մենք ունինք՝ նրանն է. բայց մենք մերկացել ենք, մենք թալանուել ենք, մեր վրայ մնում է միայն մեր կաշին: Աղաչում եմ, գնացէք ձեր աչքովը տեսէք, նայեցէք մեր դաշտերին, արտերին, մտէք մեր ամբարները, տեսէք, տեսէք որ մենք ո՞չ արտերում ցորենն ունինք, ո՞չ տներումը:

— Դուք ցորենն ունիք կամ չունիք, թալանուել էք կամ չէք թալանուել, մեզ երբէք փոյթ չէ, ասաց Շիր Ալին: Մենք միայն մէկ որոշ ընթացք ունինք բռնելու, այն է՝ ճշտութեամբ կատարել Շահի հրամանը: Դուք կամ փող պիտի տաք կամ ցորեն, եթէ ոչ, դու, աղա քեանդխողա, և այս գիւղի ձերունիները մեզ հետ պիտի գաք սուլթանիէ, որտեղ մենք ձեզ կը յանձնենք դահճապետին:

Շիր Ալի բէգի այս սպառնանքի վրայ մի քանի ձերունիներ իսկոյն սկսեցին փափալով խորհրդակցութիւն անել քանդխողայի հետ: Յետոյ նրանք մեզ յայտնեցին իրանց խորհրդակցութեանն հիշքը և սկսեցին փաղաքշական խօսքերով պաշտպանել իրանց: Քեանդխողան ձօտեցաւ ինձ և սկսեց շողորթիլ ինձ: Նա այնպիսի մի ձևով սկսեց խօսել ինձ հետ, որ կարծես թէ նա երկար ժամանակից ի վեր իմ միակ մտերիմ, սրտակից բարեկամն էր եղել: Նրա նպատակն էր ինձ միջնորդ դարձնել բարեխօսելու իրանց համար և համոզելու Շիր Ալի բէգին որ ձեռք քաշէր իրանցից: Իր խօսքերով նա աշխատում էր հասկացնել ինձ որ իբր թէ ես իմ ազնուութեամբն ու բարեսրտութեամբը շատ սիրելի էի թէ իրան և թէ բոլոր գիւղացիներին, և որ ինձ, միմիայն ինձ ունէին միջնորդ ու բարեխօս իրանց ազատելու Շիր Ալի բէգի բարկութիւնից:

Մինչդեռ քեանդխողան խօսում էր ինձ հետ, ես ոչ մի բառ չէի պատասխանում, այլ ամբողջ ժամանակը նայում էի նրա երեսին և իմ մատներով խաղում էի զայլանի հետ. բայց երբ նա յայտնեց ինձ թէ մեր կրած նեղութեան համար ինչ արդիւնք էր հասնելու մեզ, ես սկսեցի հետաքրքրութեամբ ականջ դնել նրան: Նա սկսեց հաւատացնել ինձ, որ թէև բոլորովին անհնար էր իրանց համար Շահի պահանջածը տալ, այնուամենայնիւ, գոնէ մեզ—ինձ և Շիր Ալի բէգին— մի-մի փէշքաշ (նուէր) կը տրուէր, որպէսզի մենք պաշտպանէինք իրանց շահերը:

— Այդ բոլորը լաւ ես ասում, ասացի ես, սակայն դու պիտի լաւ իմանաս, որ մենակ այս երկուսս չենք, որոնց դուք պիտի բաւարարացնէք: Դուք աչքի առաջ ունեցէք և մեր իշխա-

նաւորին—դահճապետին: Եթէ դուք ամենից առաջ նրան բաւականութիւն չտաք, ինչ էլ որ անէք, իզո՞ւր կը լինի: Անշուշտ դուք շատ լաւ էք հասկանում որ եթէ նրա ձեռքի ափը իւղէու լինէք, դուք ձեր իւրը պիտի կշռէք լիւրով, ոչ թէ մխալով:

—Ի՞նչքան որ մենք ունինք, ասաց քեանդիտողան, բոլորն էլ կը տանք, սակայն դժբախտաբար, վերջերս հարկերն այնքան ծանրացել են մեր վրայ, որ բացի մեր կիներից և երեխաներից՝ մենք ուրիշ ոչինչ չունինք նրան փէշքաշ անելու:

—Բարեկամ, ասացի ես, ոչ մի ուրիշ բան պէտք չի գալ. փող է հարկաւոր, դու միմիայն փող պիտի տաս: Փողը մեծ բան է, փողով դու կարող ես Շահի թագը գնել: Ես քեզ ասում եմ, որ եթէ դուք փող չտաք, ձեր ոտները շուտով կը կապուեն ֆալախկային:

—Ա՛, բացազանչից քեանդիտողան, ի՞նչ էք ասում, փող, փող, բայց մե՞ք սրտեղից փող բերենք: Փողի գոյութիւնը այնպէս բացակայում է մեր մէջ որ երբ մեր կիներից մէկը մի սև փող է ձեռք բերում, իսկոյն ծակում է նրան և թեւ անցկացնելով նրա միջից՝ իր վիզն է ձգում որպէս մի թանկագին զարդ:

Յետոյ նա իր շրթունքները մօտեցնելով ականջիս՝ կամայ ասաց.

—Դուք մի կատարեալ միւսիւլման էք, աւագակ չէք: Անշուշտ դուք լաւ հասկանում էք որ մենք ամենեին չենք կամենում առիւծի բերանն ընկնել, եթէ հնար լինի: Ասացէք ինձ, սրքանով կը բաւականանայնա (Շիր Ալի բէգը): Հինգ թումանը բաւական է. մենք մի ծիրանեգոյն շալ շալվար (վարտիք) էլ կը տանք նրան:

—Ես ի՞նչ գիտեմ, ասացի ես, թէ նա ի՞նչքանով կը բաւականանայ: Ես միայն այսքանն եմ կարող ասել, որ գութ ու խիղճ ասած բաները երբէք գոյութիւն չունին նրա սըրտում: Է՛հ, հինգ թումանը տասը շինիր և շալվարի փոխարէն էլ մի վերարկու տուր, յետոյ ես կ'աշխատեմ նրան համոզել որ ընդունի այդքանը:

—Վայ, այդ շատ է, զարմացաւ ծերունին: Մեր ամբողջ գիւղը տասը թումանի արժէք չունի: Խնդրում եմ, դուք նրան համոզէք որ հէնց հինգ թումանը և շալվարը ընդունի, և մենք, իբրև երախտագիտութեան նշան, ձեզ կը տանք մի շատ լաւ ընծայ—այնպէս մի լաւ բան, որ դուք կը զարմանաք:

Ես յայտնեցի Շիր Ալի բէգին, թէ իր մասին ի՞նչ էի

խօսել քեանդխողայի հետ, և թէ վերջինս ինչքան փող էր խոստանում իրան տալու: Նա շատ ուրախացաւ և ասաց.

— Հնչի, դու շատ լաւ ես արել: Ես էլ քեզ համար խօսեցի ինձ հետ խօսող ծերունու հետ: Ես նրան ասացի, որ եթէ քեզ էլ մի բաւարարացուցիչ բան չտրուի, դու կարող ես խստութիւն բանեցնել նրանց վրայ:

Վերջապէս քեանդխողան բերեց տասը թումանը ու վերարկուն և դրեց Շիր Ալի բէգի առջև, որը իսկոյն վերցրեց նրանց: Ես մի քանի բոպէ անհամբեր սպասեցի, յուսալով որ ինձ համար էլ շուտով կը բերուէր այն խոստացած ընծան, որ պիտի զարմացնէր ինձ. սակայն ոչինչ չհրեաց:

— Ապա ի՞նչ եղաւ ձեր խոստացածը, հարցրի ես քեանդխողայից, որը շարունակ նայում էր ինձ և իր աչքերով կարծես թէ աշխատում էր յոյս ներշնչել ինձ մէջ. ասա, ի՞նչ եղաւ, ի՞նչ է, ի՞նչքան է, շուտ արա, շուտ բեր:

— Այս բոպէիս, ասաց նա. մի քիչ համբերեցէք, դեռ չենք պատրաստել:

Մի քիչ սպասելուց յետոյ մեծ հանդիսաւորութեամբ ինձ մօտ տրուեց այն շալվարը, որ իմ ընկերին պիտի տրուէր:

— Այս ի՞նչ է նշանակում, բարկացայ ես: Ձէք ամաչում, չէք իմանում որ ես պաշտօնով նասաղչի եմ: Այո, մի մարդ, որ կարող եմ այրել ձեր հայրերին և ձեզ աւելի ցաւ, վիշտ ու տառապանք պատճառել, քան կրել էք մինչև հիմայ: Այս շալվարը ձեր մէջ սերունդից սերունդ դործ է ածուել, և այժմ դուք ցանկանում էք ի՞նչ վրայ ծախել: Տխմար մարդիկ էք դուք, եթէ կարծում էք որ ես այս աղտոտ շորի կտորի համար հրբևիցէ կ'աշխատեմ ձեր շահերը պաշտպանել: Իսկոյն աչքից հեռացրէք այս խայտառակութիւնը, եթէ ոչ, ես ձեզ ցոյց կը տամ թէ ինձպէս մի նասաղչի ինչեր է կարող անել:

Խեղճ գիւղացիները հէնց ուզում էին յետ վերցնել շալվարը, երբ Շիր Ալին արդելեց նրանց ասելով.

— Թողէք տեսնեմ այդ բանը: Ես վերցնելով շալվարը՝ լոյսի առաջ պահեց և ասաց.

— Օ՛, սա լաւ բան է, ոչ մի պակասութիւն չունի. է՛, ինչ որ է, ես կը վերցնեմ և շատ շնորհակալ կը լինեմ ձեզանից: Այլահն յաջողութիւն տայ ձեզ:

Գիւղացիներն ապշեցին: Նրանցից ոչ մէկը չհամարձակուեց մի խօսք ասել նրան: Ի՞նչ անէին խեղճերը: Բայց ինչ որ եղաւ, ինձ եղաւ: Ես որ այդքան մեծ յուսով մի լաւ ընծայի էի սպասում, զրկուեցի մինչև անգամ այն շալվարիցն էլ, որ ինձ էր յատկացրուել. սակայն այդ հանգամանքը մի լաւ դատ

և փորձառութիւն եղաւ ինձ համար, և ես սովորեցի թէ այնուհետեւ ինչպէս պիտի վարուէի իմ հայրենակիցներին հետ, մասնաւոր նրա հետ, որը իրան ցոյց է տալիս իբրև անկեղծ և մտերիմ բարեկամ ինձ հետ:

Գլ. ԼԵ.

Բախտը, որ մի առժամանակ խոժոռուած էր երեւում Հաջի Բարայի վրայ, այժմ ժպտում է: Նա փոխ-նայիք է դառնում:

Մենք ճանապարհուեցինք դէպի մեր բանակը՝ մեզ հետ տանելով միայն երկու գառ իբրև ընծայ մեր իշխանաւորի համար:

Բանակն համակրով մենք խկոյն ներկայացանք նայիրին, որը մեզ տարաւ դանձապետի մօտ: Վերջինս նստած էր իր վրանում և խօսակցում էր մի քանի բարեկամներին հետ:

— Լաւ, ասաց նա Շիր Ալի բէգին, ի՞նչ ես արել, ի՞նչ ես բերել — ցորենը, թէ՞ քեանդխողային:

— Թոյլաւութիւն շնորհեցէք ինձ ազաչել ձեզ, պատասխանեց Շիր Ալին, որ ոչ մէկը չեմ բերել: Գիւղի քեանդխողան և ծերունիները միայն երկու գառ են ուղարկել ձեզ համար: Դրանցից գառ ոչինչ սպասելի չէ նրանցից. որովհետեւ մենք մեր աչքովը տեսանք, որ նրանք ոչինչ չունէին: Նրանց գիւղը բոլորովին թալանուել էր, և թոյլ տուէք ինձ ասել, որ եթէ նրանց ուտելիք չուղարկուի, նրանք կը սկսեն միմիանց ուտել:

— Իրան, դոչեց դանձապետը. այդ ինչպէս է որ նրանք գառներ ունին, բայց ոչխարներ չունին: Որտեղ գառ կայ, այնտեղ ոչխար էլ պէտք է լինի:

— Ծշմարիտ էք հրամայում, ասաց Շիր Ալին. ձեր բոլոր խօսքերը ուղիղ են. բայց մենք խօսում էինք ցորենի մասին և ոչ թէ ոչխարի:

— Բայց դու ինչո՞ւ չես վարուել այնպէս՝ ինչպէս ես քեզ հրամայել էի: Ինչո՞ւ քեանդխողային և ծերունիներին այստեղ չբերիր: Եթէ ես այնտեղ լինէի, կը խորովէի այդ աւազակներին: Ես նրանց այնքան կը տանջէի, մինչև խոստովանուէին որ իրանք բոլորովին դուրկ չեն ամեն բանից: Ասա ինձ, ինչո՞ւ նրանց այստեղ չբերիր:

— Մենք ուզում էինք նրանց բերել, պատասխանեց Շիր Ալին՝ աչքով անելով ինձ, որ ես էլ վաւերացնէի իր ասածը:

Այն, մենք նրանց բոլորին էլ կապեցինք և ուզում էինք բերել: Մենք շատ էլ ձեռնեցինք նրանց, շատ էլ նախատեցինք ու հայհոյեցինք: Հաջի Բարա բէզը լաւ իմանում է ամեն բան: Նա ինքը նրանց ասաց, որ եթէ նրանք փող չտային, մենք մեծ խստութիւն կը բանեցնէինք նրանց վրայ: Մենք երբէք գթութիւն ցոյց չտուինք նրանց: Մենք այնպէս սպառնալիքներ տուինք նրանց, որ նրանք իրանց կանգնած տեղը չորացան:

— Սա ի՞նչ է ասում, Հաջի Բարա, հարցրեց խանը: Ես լաւ չեմ հասկանում թէ այդ մարդկանց ինչո՞ւ չբերիք ինձ մօտ:

— Իրաւի, ո՞վ խան, ես ինքս էլ չեմ հասկանում թէ ինչո՞ւ, խոնարհաբար պատասխանեցի ես: Գործը Շիր Ալի բէգին էր յանձնուած: Նա ինքն ամենից լաւ գիտէ թէ ինչո՞ւ: Ես նրա հետ գնացի որպէս ծառայ. ես ո՞վ եմ, խան:

Այս խօսքերիս վրայ խանը սաստիկ կատաղեց և շատ խայտառակ խօսքերով հայհոյեց մեզ:

— Ես շատ լաւ եմ հասկանում, ասաց նա իր բարեկամներին, թէ այս սրիկաները ինչ են արել: Ասա ինձ, դարձաւ նա Շիր Ալի բէգին, դու ի՞նչքան ես քո գրպանը դրել, և դու ազնւ Հաջի Բարա, դու որ հազիւ մէկ ամիս է որ իմ ծառայութեան մէջ ես—ասա, քեզ ինչ բաժին է հասել:

Մենք երկուսս էլ այլևայլ խօսքերով աշխատեցինք համոզել խանին որ մենք անմեղ էինք, սակայն իլո՞ւր: Մենք շատ երզուեցինք որ ո՞չ մի բան մեր ձեռքը չէր ընկել, սակայն անօգտ: Ո՛չ խանն հաւատաց մեզ և ո՞չ իր բարեկամները: Մի քիչ սպասելուց յետոյ նա աւելի կատաղեց և մեզ յանձնեց նայիրին, պատուիրելով նրան պահել մեզ և հսկել մեր վրայ որ չփախչենք, մինչև որ ինքը իր մօտ կանչէր գիւղացիներին և մեզ երեսառերես անէր նրանց:

Նայիրը կատարեց դահճապետի պատուէրը:

Երբ որ Շիր Ալին և ես մենակ էինք—ոչ ոք չկար մեզ մօտ, նա առաջարկեց ինձ գիւղացիներէից ստացած 10 թումանի կէսն ընդունել:

— Ո՛չ, ո՞չ, բարեկամ, ասացի ես, արդէն շատ ուշ է: Եթէ դու խմել ես արգելուած գինին և այժմ տանջուում ես սաստիկ գլխացաւից, այդ չէ՛ նշանակում որ դու պիտի աշխատես ինձ էլ խմացնել ու հիւանդացնել: Այն դասը որ դու ինձ տուիր Քաղջ Սաֆար գիւղում, ինձ լիովին բաւական է:

Նա շատ աշխատեց ինձանից խոստում առնել իրան պաշտպանելու, երբ խանն իրան երես առ երես կ'անէր քեանդխողային, սակայն ես իսկի էլ չզիջեցի նրա թախանձանքներին:

— Ա՛խ, դու չգիտես թէ իմ դարդս ինչ է, ասաց նա: Ես

սոսկում եմ ֆալախկայից: Այդ տանջանքի գործիքի անունը գող է ձգում մարմնիս մէջ: Ես համոզուած եմ, որ եթէ մի անգամ ոտներս ֆալախկային կապուեն, ես նրա տակից էլ կենդանի դուրս չեմ պրծնի, որովհետեւ ես այնքան խիստ, այնքան անողորմ եմ եղել դէպի ուրիշները, այնքան անխղճօրէն հարուածել եմ շատերին, որ բոլորն էլ այժմ իմ արիւնարըութշնամիներն են դարձել: Ես գիտեմ որ այդ ուրիշները այնքան խիստ կերպով կը հարուածեն ինձ, որ կը մեռնեմ: Երբեք եմ զուտանովը որ ամենայն յօժարակամութեամբ պատրաստ եմ ընդունելու ամեն տեսակ պատիժ, միայն թէ ֆալախկայից ազատուեմ:

Վերջապէս գիւղացիները եկան, ներկայացան խանին, որը մեզ իր ձօտ կանչեց. բայց Շիր Ալին յանկարծ աներևութացել էր, և երբ ինձանից հարցրին թէ նա որտեղ է, ես պատասխանեցի որ նա սոսկում էր ֆալախկայից և շատ հաւանական է որ փախած կը լինի:

Հէնց որ՞ ես ներկայացայ խանին, գիւղացիները, որոնք կանգնած էին նրա առջև, միաբերան ասացին.

— Այս մարդը ոչինչ չէ ստացել մեզանից. նա միայն մեզ ստիպեց մի լաւ ընծայ տալ խանին (Շիր Ալի բէգին): Ինչ վատութիւն որ արել է մեզ՝ նա է արել: Մեր դժբախտութեան վրայ մի մահացու հարուած էլ նա աւելացրեց: Նա մեր վէրքերի վրայ կրակ դրեց. սակայն այս մարդը ոչինչ վատութիւն չարեց մեզ:

Գիւղացիների այս դանդաղ շատ նպաստաւոր էր ինձ, որովհետեւ դրանք ինձ համար ճանապարհ էին հարթում առաջադիմելու իմ պաշտօնի մէջ: Գիւղացիները խանի ձօտ ինձ նկարագրեցին իբրև մի շատ բարեսիրտ և չափաւոր անձն, և իմ բարեսրտութեան ու չափաւորութեան պատմութիւնը շուտով տարածուեց ամբողջ բանակում, և մարդիկ սկսեցին զմայլել վրաս:

— Այդ նրանից է որ Հաջի Բաբա բէգը բժիշկ է, ասում էին ոմանք: Իմաստութիւնն աւելի լաւ է, քան գանձը:

— Հաջի Բաբան խելօք, խոհեմ և շրջահայեաց է, ասում էին ուրիշները: Նա լաւ հասկանում է թէ այս Բնչ հետեանք պիտի ունենայ: Նա երբէք իր ոտները չի դնիլ այնտեղ, որտեղ իր գլուխը պիտի դնէ:

Վերջապէս ես հռչակուեցի իբրև մի հասկացող և հեռատես մարդ, իհարկէ՛ շնորհիւ մի քանի հանգամանքների, որոնք կարծես թէ առաջացել էին ինձ նպաստելու, ինձ առաջադիմութիւն տալու համար:

Փանք իմ բախտին, շուտով ինձ յանձնուեց փախստական-
Շիր Ալի բէգի պաշտօնը, և ես Պարսկաստանի դահճապետ
Նամարդ խանի փոխ-նայիրը դարձայ— մի պաշտօն, որ բարձր
նշանակութիւն և հեղինակութիւն տուեց ինձ, ինչպէս որ սը-
րանից յետոյ կը տեսնուի:

Գլ. ԼԳ.

Հաջի Բարան թէև պաշտօնով դահիժ, բայց նրա սիրտը զուրկ չէ
թիւն անկու զգացումից:— Նա օգնութեան է հասնում մի հայի և հայու-
հու, որոնց նա ապաստում է թշուառութիւնից:

Շահը այս ժամանակներում պատերազմում էր ուռաների
դէմ, որոնք հաստատուել էին Վրաստանում և վտանգ էին ըս-
պանում Կուր և Արաքս գետերի միջև ընկած պարսկական սահ-
մանագլխային գաւառներին: Երևանի կառավարիչ Հասան խան
սարդարը, որ Շահի սիրելի պաշտօնեաներից մէկն էր, երկար
ժամանակից ի վեր սկսել էր անկարգ յարձակումներ գործել
թշնամիների վրայ, և հետզհետէ աւերում էր նրանց՝ թշնամի-
ների ճանապարհի վրայ ընկած բոլոր գիւղերը և դաշտավայ-
րերը, որպէսզի նրանք չկարողանային մօտենալ Պարսկաս-
տանին:

Ատրպատականի նահանգապետ՝ Շահի թագաժառանգն էլ
իր զօրքերը հաւաքել էր Դավրէժի մերձակայքում, որտեղից
նա դիտաւորութիւն ունէր շուտով առաջ արշաւել դէպի Դա-
միշու—պայքարի վայրը, որպէսզի եթէ հնարաւորութիւն լի-
նէր՝ յետ քէր թշնամիներին դէպի Թիֆլիս:

Սուլթանիէում Շահը անհամբեր լրերի էր սպասում սար-
դարից: Նա անհամբեր էր լսելու, թէ սարդարի յարձակումը
Դամիշուի վրայ ինչ հետևանք է ունեցել: Նա հրաման արձա-
կեց որ եթէ սարդարը թշնամիների գլուխներ ուղարկէ, նը-
րանց—այդ գլուխներին պատշաճ ընդունելութիւնը տրուի *):...

Ի վերջոյ մի շափառ (սուրհանդակ) հասաւ բանակը: Նա
հինգ ձիերի վրայ բարձած թշնամիների գլուխներ բերեց և մեծ
հանդիսաւորութեամբ դիզեց արքունական վրանի զրան առջև:
Սուրհանդակը յայտնեց որ ինչ-ինչ պատճառներով անհրա-
ժեշտ էր թարմ ոյժեր ուղարկել սարդարի համար: Հետևաբար

*) Երբ պարսիկները յաղթում էին իրանց թշնամիներին, նրանցից մի
քանիսի գլուխներն ուղարկում էին Չահին իրրև նշան վճռական յաղթու-
թեան:

Շահը իսկոյն նամարդ խանին իր մօտ կանչելով՝ նրան նրամա-
նատար նշանակեց տասն հազար հեծալազօրքի վրայ և նրամա-
յեց նրան շուտով արշաւել դէպի Արաքսի ափերը: Ինձ էլ հը-
րամայուեց մի քանի նասաղչիների հետ միասին զօրքիցը մի
քանի օր առաջ ճանապարհ ընկնել՝ գիւղացիների հետ կար-
գադրութիւններ անելու, զինուորների համար տեղ պատրաստե-
լու համար:

Ես ճանապարհուեցի ընկերներիս հետ և մի քանի օր
զօրքերից առաջ հասայ Երեւան: Սարդարն արդէն մի յարձա-
կում էր գործել Ղամիշլուի վրայ և վերադառնալով այստեղ՝
սպասում էր զինուորական թարմութերի հասնելուն:

Թագաժառանգը իր զօրքերով անցել էր սահմանագլխի
մի այլ կողմը՝ նպատակ ունենալով յարձակուելու Գանձակի
բերդի վրայ, որին ուսաները տիրել էին:

Հէնց որ նամարդ խանը Երեւան հասաւ, սարդարն՝ ու նա
խորհրդակցեցի՞մ և վճռեցին լրտեսներ դուրս ուղարկել հակե-
լու թշնամիների շարժումների վրայ: Նամարդ խանը իր կող-
մից ինձ գլխաւոր կարգեց քսան հոգու վրայ: Սարդարն էլ իր
կողմից նոյն թւով լրտեսներ նշանակեց, որոնք պիտի ուղե-
ցոյց լինէին մեզ երկրի այն տեղերում, որտեղերին մենք ան-
ձանօթ էինք:

Արեւմտին մենք հաւաքուեցինք և դնացինք Աշտարակ գիւ-
ղը, որտեղից մեկնելով՝ առաջ անցանք Էջմիածնի մօտից: Ար-
շալոյսը ծագում էր, երբ մենք հասանք Աշտարակի կամուրջը,
որ դեռ մթապատ էր, որովհետեւ գետի երկու կողմերից պա-
տերի պէս բարձրացած ժայռոտ ափերը իրանց ստուերներով
ձածկել էին նրան:

Աշտարակ գիւղը, որ ընկած է ճիշտ գետի ափի վրայ,
հազիւ այնքան լուսացել էր, որ մենք կարողանում էինք ազօտ
կերպով որոշել նրան ժայռերի միջից, որտեղ նա շինուած էր:
Իրա մօտ պարզապէս երևում էր մի հոյակապ շինութեան ա-
ւերակները, որ մեծ ահաւորութիւն և շուք էր տալիս ամբողջ
շրջապատող տեսարանին: Ընկերս ինձ ասաց որ այդ աւերակ-
ները բեկորներն էին հայոց այն եկեղեցիներից մէկի, որոն-
ցից շատերը յաճախ տեսնւում են Պարսկաստանի այս մասնե-
րում:

Գեառ սրընթաց վազում էր: Մենք կարողանում էինք կա-
մուրջի վրայից անցնելիս մթութեան մէջ տեսնել նրա ջրերի
վերփուրները: Մեր ձիերի ոտների տրոփիւնը երևի զարթեցրեց
գիւղի շներին, որոնք սկսեցին հաջել: Մենք լսեցինք նաև մի

աքաղաղի ձայն, և մեր աչքերն ուղղուեցին դէպի տները: Մեր մարդկանցից մէկը յանկարծ կանգ առնելով՝ գոչեց.

— Ե՛ւ Ալլի՛, այս ի՞նչ եմ տեսնում (մատնացոյց անելով աւերակներին): Դուք չէ՞ք տեսնում մի ինչ-որ սպիտակ բան այնտեղ, արդեօք այդ ի՞նչ է:

— Այո՛, այո՛, ես էլ եմ տեսնում մի սպիտակ բան. դա մի ղուլ է (յուշկապարիկ), այո՛, դա անտարակոյս մի ղուլ է. որովհետև ղուլերն առաւօտեան այս ժամին են ընդհանրապէս դուրս գալիս դիակներ գտնելու: Ես վստահ եմ որ դա մի ղուլ է և կլանում է մէկին:

Ես էլ մի բան տեսնում էի այնտեղ. բայց անկարելի էր լինում ստուգել թէ դա ի՞նչ էր: Մենք կանգ առանք կամուրջի վրայ. ամենքս էլ համոզուեցինք որ վերջապէս դա մի գերբընական էակ էր: Մեզանից մէկը Ալլի օգնութեանը դիմեց, միւսը՝ Հոսէյնի, մի երրորդը՝ Մոհամէդի և միւսները միւս իմամներէ: Ո՛չ ոք չէր համարձակուում մօտենալ նրան. բայց ամեն մէկը մի հնար էր առաջարկում նրանից ազատուելու համար:

— Ձեր շաւլարների կապերը իսկոյն բաց արէք, առաջարկեց մի ծեր իրակցի: Մենք այդ հնարքով ենք հեռացնում ղուլերին, երբ նրանք մեզ երևում են Սպահանի մօտերքում.

— Դրանից ի՞նչ դուրս կը գայ, ասաց մի ղէլիքան *): Ես այդ բանը չեմ անիլ: Ի՞նչ, այդ ղուլին ինձանից հեռացնելու փոխարէն շաւլարիս կապերը բանամ որ նրան ի՞նձ մօտ հրաւիրեմ:

Վերջապէս լուսացաւ և մենք համոզուեցինք որ մեր տեսածը աչքի պատրանք էր, որովհետև այլևս ղուլին չէինք տեսնում:

Կամուրջից անցնելով՝ դէլիքանն ասաց.

— Ես պիտի դնամ ղուլին գտնելու:

Եւ նա իր ձին քշեց դէպի գետափը և այնտեղ հասնելով՝ շրջուեց դէպի աւերակ եկեղեցին:

Նա շուտ վերադարձաւ և մեզ յայտնեց, որ մեր ղուլ կարծածը մի կին է եղել, որի սպիտակ չարսաւը գրաւել է մեր ուշադրութիւնը, և որ այդ կինն ու մի տղամարդ միասին թագնուած էն մի քանդուած պատի ստուերի տակ:

Ինձ հետ վերցնելով մեր մարդկանցից հինգ հոգի և միւսներին կամուրջի մօտ թողնելով՝ ես իսկոյն ձիս քշեցի դէպի աւերակը ստուգելու թէ այդ մարդն ու կինը ինչո՞ւ էին թաղ-

*) Դէլիքան տաճկերէն նշանակում է «գիթ արիւն ունեցող երիտասարդ». բայց հեղինակը թարգմանում է «ճագարի ուղեղ ունեցող մի երիտասարդ»:

նուեւ այնտեղ: Մենք մտանք աւելակներն մէջ, որտեղ տեսանք մի կին, որ ըստ երեւոյթին հիւանդ պառկած էր գետնի վրայ, և մի տղամարդ նրա մօտ նստած՝ մեծ հոգածութեամբ պահում նրա գլուխն իր ծնկի վրայ: Կնոջ դէմքը, որի կէսը ծածկուած էր քօղով, խիստ զուճաթափ էր, բայց և այնպէս շատ գեղեցիկ էր: Տղամարդը մի առոյգ, կորովի և վառվռուն երիտասարդ էր: Նա իսկական տղամարդ էր: Նա հագնուած էր վրացու պէս: Մի դաշոյն ունէր նա իր գօտու մէջ խրած, և իր մօտ պատի դէմ դրուած էր մի հրացան: Կնոջ սպիտակ շարսար տեղ-տեղ պատառօտուած և ներկուած էր արիւնով:

Թէպէտ ես ապրել էի այնպէս մի շրջանում, որտեղ տիրում էր բռնութիւնը, անիրաւութիւնը, և որտեղ գոյութիւն չունէին գութն ու խիղճը, այն, թէպէտ ես շատ թշուառներէ վիճակ էի տեսել և սիրտս չէր շարժուել, սակայն այստեղ, այս աւերակների մէջ, այս երկու երիտասարդների դրութիւնը այնպէս շարժեց սիրտս, որ ես մի քանի բռնի մի տեսակ յարգանքով և տխուր զգացումներով կանգնեցի նրանց մօտ առանց մի բառ խօսելու նրանց հետ:

— Ի՞նչ էք անում այստեղ, հարցրի ես: Եթէ օտարականներ էք և ճանապարհորդում էք այս կողմերից, ինչո՞ւ չէք իջել գիւղումը:

— Եթէ դուք մարդու զգացումներ ունէք, պատասխանեց տղամարդը, Աստուծոյ սիրուն համար օգնեցէք մեզ: Եթէ սարգարը ձեզ ուզարկել է կայանաւորելու մեզ, դարձեալ օգնեցէք ինձ՝ աղատելու այս խեղճ, այս դժբախտ աղջկան, որ մեռնում է: Ես գիտադրութիւն անող չեմ. բայց աղաչում եմ, աղատեցէք սրան:

— Բայց դուք սվքեր էք, հարցրի ես: Սարգարը մեզ ոչինչ չէ հրամայել ձեր մասին: Ո՞րտեղից էք գալիս և որտեղ էք դընտում:

— Մեր պատմութիւնը շատ երկար ու տխուր է, պատասխանեց երիտասարդը: Եթէ դուք կ'օգնէք ինձ այս տանջուող աղջկան այստեղից մի տեղ տանել, որտեղ կարելի կը լինի նրան մէկի խնամասրութեանը յանձնել, ես կը պատմեմ ձեզ թէ մենք սվքեր ենք և ինչ է պատահել մեզ: Այս տարաբախտ աղջիկը վիրաւորուել է, թէպէտ յոյս ունիմ որ վէրքը մահացու չէ: Եթէ սրան մէկի հոգատարութեանը յանձնենք, յոյս ունիմ որ շուտով կ'աողջանայ: Փնփն Աստուծոյ, բախտաւոր եմ, որ դուք սարգարի պաշտօնականներից չէք: Աղաչում եմ, բարեկամացէք ինձ հետ, և իմ տխուր պատմութիւնը թերեւ ձեզ կը թելադրէ՝ ձեր պաշտպանութեան տակ առնել մեզ:

Կարիք չկար որ երիտասարդը դիմուժ անէր իմ զգացմունքներին, որովհետև նրա կերպարանքն ու ձևերը արդէն այնպէս էին շարժել սիրտս, որ ես վճռեցի կատարել նրա կամքը: Ես նրան միամտացրի, որ մենք իսկոյն իր հիւանդ բարեկամուհուն գիւղը կը տանէինք և կը յանձնէինք մէկի խնամատարութեանը:

Մինչև այս բոպէն վիրաւոր աղջիկը դեռ ոչ մի բառ չէր խօսել: Նա իր չարսաւը հաւաքել էր իր շուրջը և մերթընդմերթ խոր հառաչանքներ էր արձակում: Երևի նա սաստիկ ցաւից տանջուժ էր:

Ես իմ մարդկանցից մէկին հրամայեցի իր ձիուց իջնել: Նա իջաւ, և հիւանդ աղջկան նրա ձիու վրայ նստացնելով, ճանապարհուեցինք դէպի գիւղը: Գիւղում նրան տարանք մի տուն, որի տէրը մի շատ բարեսիրտ մարդ էր: Տանտիրոջը մենք պատուիրեցինք լաւ խնամք տանել հիւանդին և ոչ մի ջանք չխնայել նրան հանգիստ պահելու համար:

Գիւղումը մի պառաւ կին կար, որ անուանի էր իբրև վիրաբոյժ: Մենք շուտով նրան կանչեցինք և պատուիրեցինք, որ ամեն ջանք գործ դնէր հիւանդ աղջկան շուտով առողջացնելու:

Երիտասարդը մեզ յայտնեց որ ինքն ու իր ընկերուհին հայեր էին, և քանի որ Աշտարակի բնակիչներն էլ հայեր էին, խեղճ տանջուող աղջիկը զգաց որ այդժամ ինքը լաւ ձեռքերում է:

Գլ. ԼԷ.

Յովսէփ անունով հայ երիտասարդի և նրա կին Մարիամի պատմութիւնը:

Իմ դիտաւորութիւնն էր այդ օրը առաջ գնալ դէպի Աբարանի բարձրութիւնները՝ գտնելու մի լաւ հովասուն վայր իջևանելու համար և մի լաւ արօտատեղի՝ մեր ձիերի համար: Բայց լսելով որ մի քանի թափառական ցեղեր, որոնցից մենք վրաններ և պաշար պիտի առնէինք, պատերազմի վախից թողել հեռացել էին իրանց բնակավայրերից և քաշուել հեռու սարերը, ուստի ես միտքս վերջաւորեցի հէնց Աշտարակ գիւղում մնալ այդ օրը:

Մի քանի ժամ քնելուց և լաւ թարմանալուց յետոյ ես ինձ մօտ կանչեցի հայ երիտասարդին, որի հետ միասին ճաշելուց յետոյ խնդրեցի նրանից պատմել ինձ իր և իր ընկերունու պատմութիւնը:

երիտասարդի դէմքը, որ առնական գեղեցկութիւն, ոգևորութիւն և անձկութիւն էր արտայայտում, ինձ համոզեց որ ինչ որ նա խօսում էր և գեռ պիտի խօսէր, բոլորովին ճշմարիտ պիտի լինէր:

Նա վերջապէս իր պատմութիւնը սկսեց այսպէս.

«Ես մի հայ քրիստոնեայ եմ Յովսէփ անունով: Հայրս Ղամիշլու հայաբնակ գիւղի ուէան (գիւղապետն) է: Մեր գիւղն ընկած է Փամբակու գետի մօտ, որ այստեղից միայն վեց ֆարսաղ ճանապարհ է: Ապրելով մի կանաչապատ վայրում, որ հարուստ է ճոխ արօտատեղերով և որտեղ մենք վայելում ենք զով մ մաքուր օդ, մենք առողջ, առոյգ, ուժեղ և զիմացկուն մարդիկ ենք. և թէպէտ շատ անգամ մենք խիստ հարստահարութիւններ ենք կրել, և մեզ վրայ շատ ծանրացել են հարկերը, այնուամենայնիւ մենք երջանիկ ենք եղել:

«Ապրելով հեռու լեռներում՝ հեռու ենք եղել նաև այն բռնութիւններից, որոնց ենթարկւում են քաղաքների մօտ բընակաւորները: Աշխարհից էլ կղղիացած լինելով՝ մեր սովորութիւնները շատ պարզ են մնացել և մեր կեանքը՝ նահապետական է:

«Ես մի հօրեղբայր ունիմ որ սարկաւազ է էջմիածնում և սպասաւորում է մեր կաթուղիկոսին: Մի քեռի էլ ունիմ որ մեր գիւղի քահանան է: Մեր եկեղեցասէր ընտանիքի ցանկութեամբ որոշուեց որ ես էլ ապագայում եկեղեցուն ծառայեմ: Ուստի երբ ես աասը տարեկան էի, ինձ էջմիածին ուղարկեցին, որտեղ գրել, կարդալ և ժամասացութիւն սովորեցի: Ուսումը շատ թանկ բան էր ինձ համար: Ես ետանդով ու ժրջանութեամբ սովորում էի դասերս, բացի իմ դասազրքերից ինչ գիրք էլ որ ձեռքս էր ընկնում, ես ազահութեամբ կարդում էի:

«Էջմիածնի վանքումը մի մեծ մատենադարան կայ, որից ես յաճախ օգտուում էի: Մի անգամ այնտեղից ես վերցրի մի հայոց պատմութեան գիրք, որը կարգալով իմացայ որ մենք էլ մի ժամանակ մի աղբ ենք եղել և ունեցել ենք մեծ թագաւորներ: Անդրազառնալով մեր արդի ընկած և արհամարհուած դրութեան վրայ և տեսնելով թէ այսօր մենք ինչպիսի մարդկանց իշխանութեան տակ ենք ապրում, սիրտս այնպէս յուզուեց, ալիկոծուեց, որ ես վճռեցի թօթափել բռնակալութեան լուծը: Այս իմ վճիռը յեղաշրջեց իմ քահանայ դատաւոր միտքը, և ես այն օրից բոլորովին մի տարբեր սրտի, բնաւորութեան և բաղձանքի տէր մարդ դարձայ:

«Այդ ժամանակներում պատերազմ բացուեց պարսիկներ

րի և ոռւսների մէջ, Մեր գիւղը ընկած էր երկու թշնամիների զօրքերի ճանապարհի վրայ և իհարկէ՝ մեծ վտանգի մէջ էր: Մտածելով որ այդպիսի մի վտանգաւոր ժամանակում իմ ընտանիքը մեծ կարիք ունէր իմ օգնութեան և պաշտպանութեանը, ես վճռեցի թողնել էջմիածինը և վերադառնալ տուն:

«Քիչ ժամանակ էր մնում որ ես քահանայ ձեռնադրուէի, սակայն ես մերժելով այդ պաշտօնը՝ թողի վանքի խուցը, հեռացայ էջմիածնից և գնացի տուն:

«Մեր տնեցիք արդէն զգացել էին պատերազմի սոսկումները, որովհետև թէ պարսիկ և թէ ոռւս աւազակները խուճր-խուճր յարձակումներ էին գործել մեր և մեր հարևան գիւղերի վրայ, և անմեղ, անմեղա և խաղաղ բնակիչներին նեղել, տանջել ու թալանել էին:

«Թէպէտ այս սահմանազլխային պատերազմը միանգամայն ապարդիւն անցաւ երկու հակառակորդ պետութիւնների համար էլ, սակայն շատ զարհուրելի և միանգամայն աւերիչ հետևանք ունեցաւ բոլոր այն խեղճ, անբախտ գիւղացիների համար, որոնք բնակւում էին պայքարի վայրի սօտերքում:

«Մի կողմից մենք շարունակ ահուգողի մէջ էինք, սարսափում էինք ասպատակող թշնամիներից, միւս կողմից էլ ոռւս զինուորները հարստահարում էին մեզ, փող էին ուղղում, ուտելիք էին ուղղում: Մեր արտերը ոտնակոխ եղան, մեր հօտերը ցիրուցան, և մենք ինքներս ամեն բոլէ գերի տարուելու վախի ու վտանգի մէջ էինք:

«Վերայ այդր ամենայնի մենք որպէսզի կարողանայինք մեզ փրկել սովամահ լինելուց՝ շարունակեցինք մշակել մեր արտերը, բայց այն աստիճան վտանգի մէջ էինք, որ նոյնիսկ գործելու ժամանակ՝ ստիպուած զինուած էինք մնում: Միշտ սուրը կապուած էր մեր գօտուց և հրացանը կախուած մեր ուսից: Երբ մենք հեռուից օտարականներ էինք տեսնում, իսկոյն խմբակ էինք կազմում և պաշտպանւում էինք:

«Այս եղանակով մենք մի քանի տարիներ մեծ նեղութեամբ կարողացանք տուն տանել մեր ցորենը և նախախնամութեան օգնութեամբ բաւական պաշար ամբարեցինք: Բայց այստեղ ես ստիպուած եմ մանրամասնութիւնների մէջ մտնել, որպէսզի կարողանամ ձեզ լաւ պատմել իմ անձիս վերաբերող զէպքերը:

«Երկու տարի սրանից առաջ, երբ մենք ժողովում էինք մեր հունձը, ես մի առաւօտ արեւածաղից շատ առաջ դուրս էի գնացել հնձելու մեր ամենահեռու արտերի մէկի ցորենը: Սո-

